

Ա. Վ. ԿՈՍԵՐԵՎ.

ՍՏԱԼԻՆՑԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԽՈՇՀՐԴԱՅԻՆ
ՅԵՐԻՑԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

342 (47)

4-75


ԽՈՀՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1937

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿԻՐՆԵՐԻ, ՄԻԱՅՎՐ





Ա. Վ. ԿՈՍԱՐԵՎ

342(47)

Կ-7547

Ա. Վ. ԿՈՍԱՐԵՎ

08 FEB 2009

ՍՏԱԼԻՆՑԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ
ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

ԶԵԿՈՒՅՈՒՄ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ-ԻՆ ԿԻՑ
ԸՆԿ. ՅԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ԱՆՎԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ԴՊՐՈՑԻ
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ

Ստալինյան Սահմանադրությունը խորհրդային յերիտասարդությանը պարզաբանելն զգալի չափով ավելի բարդ դործ է, քան հասակավոր աշխատավորների շրջանում այն պարզաբանելը:

Մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները ստալինյան Սահմանադրության համար մզված պայքարի հսկայական ձանապահէն անցել: Նրանք Լենինի-Ստալինի կուսակցության ղեկավարությամբ նվաճել են այն, ինչ վոր գրի յե առնված Սահմանադրության մեջ: Համեմ (բ)կ հետ միասին բանվորներն ու գյուղացիներն իրենց սամերի վրա յեն կրել այդ պայքարի մեծագույն բոլոր գժվարությունները: Այդ պատճառով ել ստալինյան Սահմանադրությունը հասկանալի յե նրանց: Նրանց հիշողության մեջ գեռաս վառ են մնացել համառ պայքարի այն տարիների հիշողությունները, վորոնք թագնված են Սահմանադրության յուրաքանչյուրը հոդվածի հետևում: Նրանք կարող են համեմատել խորհրդային իրավակարդում ունեցած իրենց հիանալի կյանքը կապիտալիստական հասարակության որով ունեցած իրենց կյանքի պայմանների հետ:

Այլ և զործը յերիտասարդության վերաբերմամբ, վորը ծնվել և Մեծ պրոլետարական հեղափոխությունից հետո (իսկ այդ յերիտասարդությունն այժմ կազմում է ԽՍՀՄ-ի ամբողջ բնակչության 43 տոկոսը):

Խորհրդային Միության յերիտասարդությունը խորհրդային իրավակարդի որով և աճել: Նա ողտովում է սոցիալիստական հասարակության արդեն նվաճված բոլոր նյութական, կուլտուրական և քաղաքական բարիքներից:

Խորհրդային յերիտասարդության վերակշռող մասսան Փիզիկապես ու հոգեպես իր կաշու վրա չի զգացել կապիտալիստների, դործարանատերերի, կալվածատերերի լծի տակ գտնված մարդկանց կյանքի բոլոր սարսափները: Այդ անցյալ կյանքի մասին մեր յերիտասարդությունը կարող է դատել միայն գրքերից և մեկ ել 4ին բանվորների ու գյուղացիների պատճառներից:

9068-56



A. V. КОСАРЕВ

СТАЛИНСКАЯ
КОНСТИТУЦИЯ И
СОВЕТСКАЯ МОЛОДЕЖЬ

АРМПАРТИЗДАТ, ЕРЕВАН, 1937 թ.

Առանց իմանալու ծանր անցյալը, առանց հողեպես ու ֆիզիկապես ճաշակած լինելու այդ անցյալը, յերիտասարդության համար դժվար է դնահատել ատալինյան Սահմանադրության ամբողջ վեհությունը։ Զե՞ վոր Սահմանադրության՝ յուրաքանչյուր հողեված արդյունք և աշխատավորության՝ սոցիալիզմի համար մղած պայքարի, վորին մեր յերիտասարդ սերունդները մասնակցություն չեն ցույց տվել թեկուղ լոկ այն պատճառով, վոր միայն այժմ են դիտակից կյանքի շրջանը թևակոխում։

Որինակի համար վերցնենք Սահմանադրության 125-րդ հոդվածը, վորը խոսքի, մամուլի, ժողովների, միտինդների և այլնի ազատության մասին ե խոսում։ Այդ հոդվածն առանց հասուլ պարզաբանումների հասկանալի յե հին բանվորներին ու գյուղացիներին։ Նրանք գեռ հիշում են, թե ինչպես կաղակները, ժանդարմները և ցարական զինվորները ցրում ելին բանվորների ժողովները, թե ինչպես նրանք անխնա գնդակահարում ելին ցույցերը, անդեն տղամարդկանց, կանանց ու յերեխաներին, թե ինչպես հետապնդվում եր ամեն մի կենդանի խոսք, թե ինչպես հազարավոր լավագույն մարդիկ կանդալներ հաղած զնում ելին հեռավոր աքսորավայրերը, բանտերը, տաժանավայրերը՝ նրա համար, վոր հանդինել են բողոքի ձայն բարձրացնել և աշխատավորներին կոչ են անուած պայքարելու շահագործողների դեմ։ Յեկայի պատճառով հին բանվորներն ու գյուղացիներն այնպես բարձր են գնահատում այն աղատությունները, վոր նրանց ավեց Մեծ սոցիալիստական հեղափոխության հաղթանակը։ Նրանք գիտեն, վոր այդ աղատության համար մղված պայքարում թափվել ե հաղարավոր աղնիվ մարդկանց, բանվոր դասակարգի լավագույն զավակների արյունը։ Բայց լա՞վ գիտե արդյոք այդ մասին խորհրդային յերիտասարդությունը։ Նա իր կաշու վրա չի զդացել պայքարի բոլոր ծանրությունները և ոգտվում է այդ աղատություններից՝ ինչպես ինքնըստինքյան հասկանալի բաներից։ Այդ պատճառով յերիտասարդությանը պետք է առանձինամբ առանց պահանջման ու նշանակությունը։

Յեթե, որինակի համար ասենք, յուրաքանչյուր հին բանվորի ու գյուղացու առանց վորեւ հատուկ պարզաբանումների հառանալի յե Սահմանադրության 118-րդ հոդվածը, վորն աշխատանքի

իրավունքի մասին ե խոսում, ապա այդ հոդվածն այնքան ել հանականը չե շատ յերիտասարդների համար։

Մեր յերիտասարդների մտքովն անդամ չի կարող անցնել այն, վոր նա կարող է մնալ առանց աշխատանքի։ Զե՞ վոր նա լիակատար հասարավորություն ունի իրեն առաջարկվող բազմաթիվ աշխատանքներից ընտրել այն աշխատանքը, վորն իրեն ամենից շատ ե դուր գալիս, վորն ամենից շատ ե իր սրտովը։ Յեկա աշխատանքն ել բանվորի բոլոր ուժերը հյուծող ծանր բեռից, ի՞նչպիսին եր նա կապիտալիստական իրավակարգում, —մեղնում պատովի և արիության գործ ե գարձել։

Աշխատանքի իրավունքը, այդ պատճառովվ ել, շատ յերիտասարդներ դիտում են վորպես մի ինչվոր ինքնըստինքյան հասկանականը բան։ Նրանք մինչև իսկ զարմանում են, յերբ նրանց ասում են, թե աշխատանքի իրավունքը մի մեծագույն նվաճում ե։ «Իսկ այլ կերպ ի՞նչպես կարող ել լինել։ Ի՞նչպես կարող են մարդիկ առանց աշխատանքի ապրել»…

Յերիտասարդությունն այդ նվաճման նշանակությունը լիովին կհասկանա միայն այն դեպքում, յեթե մենք նրան ողնենք համեմատելու մեր այժմյան կյանքը հեղափոխությունից առաջ աշխատավորների վարած կյանքի հետ, յեթե մենք նրան սովորեցնենք տեսնելու այն անդամնդը, վորը մեր սոցիալիստական հասարակությունը բաժանում է կապիտալիստական իրավակարգից՝ իր շահագործումով, ճգնաժամերով, աղքատությամբ ու գործազրկությամբ հանդերձ։

Նույնը կարելի յե ասել նաև Սահմանադրության 119-րդ հոդվածի մասին, վորը հանդստի իրավունքի մասին ե խոսում։ Այս հոդվածի նշանակությունը միշտ ել բավականաչափ հասկանալի չե յերիտասարդության համար։ Ապա ի՞նչպես կարելի յե առհասարակ առաջանակությունը առանց հանդստի։ Մեր յերիտասարդությունը չի հասկանում այդ։

Պոլետարական պետությունն այդ հանդիսան ապահովում ե բոլոր անհրաժեշտ պայմաններով (կրծատ աշխատանքային որ, արձակուրդներ, հանդստի տներ, ակումբներ, կուլտուրայի պարկեր, Փիղիկական կուլտուրա, բարեկարգ բնակարաններ և այլն), վոր աշխատավորները յերբեք չեն կարող ունենալ կապիտալիզմի ժամանակ։

Հանդստի այդ իրավունքից զրկված ելին կապիտալիզմի որով

բանող աշխատամվորները : Կապիտալիզմը շահույթ ստանալու նպատակով ծծում եր բանվորներից ու գյուղացիներից , յերիտասարդներից ու յերեխաներից նրանց բոլոր կենսական հյութերը : Կապիտալիստները սահմանում եին հյուծող աշխատանքային որ—10, 12, 14 ժամ . արձակուրդներ չեին տալիս բանվորներին : Ակումբները , սպորտը , թատրոնները վորապես զվարճություն ծառայում եին միայն նյութապես ապահովված փոքրամասնության համար , այսինքն՝ բուրժուազիայի և նրա արբանյակների համար :

Վորապեսդի յերիտասարդությունը լիովին հասկանա հանդատի իրավունքի ամբողջ նշանակությունը , պետք է այնուամենայնիվ նրան ողնել համեմատելու անցյալը ներկայի հետ :

Յեփս մի որինակ —յեթե Սահմանադրության 121-րդ հոդվածը , վորը խոսում է կրթության իրավունքի մասին , առանց հասուլի պարզաբանումների հասկանալի յե հին բանվորներին ու գյուղացիներին , ապա այդ իրավունքը փաստորեն արդեն վայելող յերիտասարդությանը հարկավոր է անպայման պարզաբանել նաև այս հոդվածի ամբողջ նշանակությունը :

Բանվորներն ու գյուղացիները հիշում են այն ժամանակները , յերբ նրանց զավակները զուրկ եյին մինչև իսկ տարրական կրթություն ստանալու հնարավորությունից , ել չենք խոսում մինակարգ ու բարձրագույն կրթության մասին : Նրանք հիշում են , թե ինչպիսի դժվարություններ եր ներկայացնում զավակներին կըրթություն տալը (ընդունվելու դժվարությունը , ուսման բարձր վճարը և այլն) :

Խորհրդային ամբողջ յերիտասարդությունը , ակսած մանկական հասակից , պարտադիր տարրական ուսում և անցնում դպրոցում և հնարավորություն ունի ընդունվելու յերկրի ամեն մի դպրոցական հաստատություն : Մեզանում կրթություն ստանալը յուրաքանչյուր յերիտասարդի համար (յեթե նա ուզում է սովորել) դժվարություն չի ներկայացնում : Նա ստիպված չե տանջվել վորեե դպրոց ընկնելու համար , —նա գնում է սովորելու այնտեղ , վորտեղ այդ անհրաժեշտ է , և սովորելու այն , ինչի ընդունակ է :

Միւնույն բանը կարելի յե ասել ստալինյան Սահմանադրության նաև բազմաթիվ այլ հոդվածների մասին :

Այս ամենը խոսում է միայն մի բանի—այն առանձնահատկությունների մասին , վոր անհրաժեշտ է հաշվի առնել ստալինյան Սահմանադրությունը մեր յերիտասարդությանը պարզաբանելիս :

Իսկ մեզ անհրաժեշտ է հասնել այն բանին , վոր խորհրդային ամբողջ յերիտասարդությունը խորապես իմաստավորի ու համեստաց այդ պատմական փաստաթղթի ամբողջ վեհությունը : Ուստի յուրաքանչյուր պրոպագանդիստ , յուրաքանչյուր կոմյերիտական աշխատող , ստալինյան Սահմանադրությունը յերիտասարդությանը բացատրելիս , անողայման պետք է , իբրև լուսաբանություն և հակառակություն , ուղագործի այն հարուստ պատմական նյութը , վոր պատկերում է ցարական Ռուսաստանի մոռայլ անցյալը և ցույց է տալիս , թե մեր յերկրի աշխատավորներն ինչ գնով են ձեռք բերել ստալինյան Սահմանադրության մեջ գրի առնվազնականմասումները :

Այս գեկուցումով մենք հենց նապատակ ենք դնում դյուրացնել կոմյերիտական աշխատողների , ոլորպագանդիստների գործը՝ ձիչտ պարզաբանելու յերիտասարդությանը ստալինյան Սահմանադրության միքանի հոգվածները :

I. ԱՍԱԼԻՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԴՐՈՇՆ Ե

Դարերով ճնշված մարդկությունը յերազել է այնպիսի հասարակակարգի մասին, վորտեղ չեն լինի շահագործողներ ու շահագործվողներ, վորտեղ չի լինի իրավապրկություն, աղքատություն, գործազրկություն, վորտեղ աշխատանքը յուրաքանչյուր աշխատունակ քաղաքացու իրավունքը կդառնա:

ԽՍՀՄ-ի Մեծ պրոլետարական հեղափոխությունն արժատական հեղաշրջում առաջ բերեց մարդկության պատմության մեջ: Բուրժուազիայից խլելով իշխանությունը, ԽՍՀՄ-ի աշխատավորները, Համեր (բ) կ դեկալարությամբ, սկսեցին կառուցել նոր հասարակություն—սոցիալիստական հասարակություն:

Ընկեր Ստալինը դրել է. «...պրոլետարական հեղափոխության հիմնական խնդիրն ե՝ իշխանությունը դրավելով նոր սոցիալիստական եկոնոմիկա կառուցել»*:

Այդ խնդիրը կենսագործված է: ԽՍՀՄ-ում վերջնականապես վոչչացված և մարդու շահագործումը մարդու կողմից, վերացված են մակարուծական դասակարգերը, վերացված են աղքատությունն ու գործազրկությունը:

Սոցիալիզմը ստալինյան Սահմանադրության հիմքն է: Սոցիալիզմն արդեն վերացական յերազ չե, այլ ոեալ իրականություն: Ստալինյան Սահմանադրությունն ամփոփեց կապիտալիզմի դեմ մղված պայքարի համբարումարները, արտացոլեց մերնվաճումների արդյունքները: Սահմանադրությունը հաստատեց, վոր Խորհրդային Միության տնտեսական հիմքը կազմում ե տնտեսության սոցիալիստական սիստեմը, արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը:

Ժողովուրդների պատմության մեջ առաջին անգամ սոցիալիզմի բազայի վրա հիմնված և մի բազմազդ մեծագույն պետու-

* Ստալին, Լենինիզմի հաբակը, 107 էջ, 10-րդ հրատ. (հայերեն, էջ 140):

թյուն, վորը դիմացավ բոլոր ու ամեն տեսակ փորձությունների և ամենաամուր պետությունն է: Այս պետության մեջ ձեռք և բերված ժողովուրդների յեղբայրություն, և վոչչացված են ողպային յերկապառակությունն ու անհավասարությունը:

Ստալինյան Սահմանադրությունը սոցիալիստական նվաճումների որենսդրական ձևակերպումն է:

Ընկեր Ստալինը խորհուրդների ԽIII Արտակարգ համագումարում արած իր զեկուցման մեջ ասել է. «Մեր խորհրդային հասարակությունը հասալ այն բանին, վոր նա արդեն հիմնականում իրականացրեց սոցիալիստական հասարակակարգ, այսինքն՝ իրագործեց այն, ինչ վոր մարքսիստներն այլ կերպ կոչում են կոմունիզմի առաջին կամ ստորին փուլ: Նշանակում ե՝ մեղ մոտ արդեն հիմնականում իրականացված և կոմունիզմի առաջին փուլը, սոցիալիզմը»:

ԱՄԵՆԱԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ստալինյան Սահմանադրությունն ամենադեմոկրատական սահմանադրությունն է աշխատավայր՝ բառիս բուն իմաստով՝ նշանակում է ժողովրդի իշխանություն, կամ, ինչպես այս հասկացողությունը վալորդիմիր ԽՍՀՀ Լենինն է թարգմանել, ժողովրդի ինքնակալություն:

Հենց վոր ԽՍՀՄ-ի աշխատավորները Լենինի-Ստալինի կուսակցության զեկավարությամբ 1917 թվականին տապալեցին բուրժուազիային, իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, նրանք սահմանեցին ամենապեմոկրատական պետական կառուցվածքը, հոգուտ ժողովրդի մեծամասնության:

Բայց դասակարգային կույի պայմանները պահանջում ենին պեմոկրատիայի վրաոց սահմանափակում, վորովհետեւ պըոլետարիատը պետք և ձնելու թշնամի դասակարգերի դիմադրությունը: Այդ սահմանափակումներն ուղղված եյին դվարավորապես շահորդություղ տարրերի վեմ:

Իսկ այժմ սոցիալիզմի վերջնական հաղթությունը ԽՍՀՄ-ում ճնարավորությունն ավելց վերացնելու այդ սահմանափակումները:

Խորհրդային զեմոկրատիան այլևս չդիմաց վո'չ մի բացառում, վոչ մի վերապահություն, վորովհետեւ շահագործող դասակարգերը վերջնականապես վոչչացված են, իսկ խորհրդային իշխանությունը դարձել է անհաղթելի ուժ:

Արդի կապիտալիստական յերկիրների, մինչև իսկ ամենա—«ուն-մոկրատական» յերկիրների սահմանադրությունները, ինչպես, որինակ, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Անգլիայի սահմանադրությունները, ծառայում են բնակչության փոքրամասնության տիրապետությունը մեծամասնության վերաբերմամբ, այսինքն՝ շահագործողների տիրապետությունը շահագործվողների վերաբերմամբ ամրապնդելու նպատակին:

Բուրժուական յերկիրների սահմանադրությունները, վորոնց թվում նաև այսպես կոչված «դեմոկրատական» սահմանադրությունները, յենում են կապիտալիստական հասարակակարգի անասնության համոզմունքից և հաստատում են կապիտալիզմի հիմքերը:

Դրանք, այդ սահմանադրությունները, տիրապետող կապիտալիստական դասակարգերի շահերն են ազահովում: Իսկ մեր Սահմանադրությունը յենում ե բոլոր աշխատավորների շահերից և ծառայում ե վո՛չ միայն շահագործող դասակարգերի վերացման նպատակին, վորին մենք արդեն հասել ենք, այլև կապիտալիզմի մնացուկները մարդկանց գիտակցության և եկոնոմիկայի մեջ վերջնականապես հաղթահարելուն:

Այդ Սահմանադրությունը ծառայում ե սոցիալիստական իրավակարգի, այսինքն՝ անդասակարգ հասարակության ամբապընդան նպատակներին. Նա հենվում ե սոցիալիզմի հիմքերի վրա և հեղափոխության նվաճումներն ամրապնդում ե որենսդրական կարգով: Նա ապահովում ե ամրող աշխատավորության, ամբողջ ժողովրդի շահերը:

Հենց այդ պատճառով ել նա ամենադիմոկրատական սահմանադրությունն է աշխարհում:

Ստալինյան Սահմանադրությունն ամենադիմոկրատականն է վո՛չ միայն ներկայումս գոյություն ունեցող, այլև անցյալում գոյություն ունեցած սահմանադրությունների մեջ:

XVII—XVIII դարերում Արեմտյան Յեվրոպայի մի ամբողջ շարք առաջակոր յերկիրներում անցավ բուրժուական հեղափոխությունների ալիքը: Պատմությունը պահպանել է նրանցից մնացած գաղափան սահմանադրական վավերադրեր, և մենք հնարավորություն ունենք բաղդատելու դրանք մեր ստալինյան Սահմանադրության հետ:

Այդ սահմանադրությունները, իսկ նրանք գեմոկրատական

նվաճումների գաղաթնակետն է ին բուրժուական հասարակության մեջ, —վոչ մի կերպ չեն կարող համեմատվել Խորհրդային Միության Սահմանադրության հետ:

Ահա, որինակ, հոչակավոր «Մարդու և քաղաքացու իրավունքների գեկլարացիան», վորը Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց 1789 թվականի ոգոստոսի 26-ին: Այդ գեկլարացիան հոչակում եր, վոր «բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավատար, վոր նրանց անկապտելի իրավունքն ե ազատությունը, անվտանգությունը և մնշմանը դիմացը ելլը»: Սակայն, հենց այլուեղ ել քաղաքացու անկապտելի իրավունքների թվում մատնանշվում եր նաև մասնավոր սեփականությունը: Դեկլարացիան առանձնապես ընդդժում եր, վոր «սեփականությունը մի անխախտելի ու սրբազն իրավունքն է»:

Դեկլարացիան այդ հողվածներում անհաշտելի հակասություն եր պարունակում: Այնուեղ, վորտեղ մասնավոր սեփականությունն ե իշխում, չի կարող իրական ազատություն և իսկական հավասարություն լինել: Այդ բանում Ֆրանսիայի աշխատավորները շատ շուտ համոզվելու առիթ ունեցան:

1793 թվականին Փարիզի չքավորության ներկայացուցիչներից մեկը՝ Ժակ Ռուն, Ազգային կոնվենտի առաջ հանդես գալով, առում եր.

«Ազատությունը վոչ այլ ինչ է, բայց յեթե դատարկ ցնորք, յերբ մի դասակարգ կարող ե անպատճիծ կերպով սովորականությամբ ուժապատ անել մյուսին: Հավասարությունը դատարկ ցնորք է, յերբ հարուստը, չնորհիվ մենաշնորհների, իր նմանների վերաբերմամբ կյանքի ու մահվան իրավունք ե վայելում... Յեկմիթե սրբիկայի սեփականությունն ալելի սուրբ է, քան մարդու կյանքը»:

Ահա մի այլ սահմանադրության, Լեհաստանի սահմանադրության, որինակը, վորն ընդունվել է 1935 թվականին: Այդ սահմանադրության 32-րդ հոդվածն ասում է, վոր սեյմը (լեհական պառլամենտը) «կազմվում ե ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ ընտրված պատղամավորներից»:

Կարծես՝ լիակատար գեմոկրատիա յէ: Բայց արդեն այդ սահմանադրության հաջորդ հոդվածն ընտրելու իրավունքից դրկում է մինչև 24 տարեկան ամբողջ յերիտասարդությանը և ընտրվե-

լու իրավունքից գրկում ե մինչև 30 տարեկան ամբողջ յերիտառապությանը։ Նույն հոդվածն իրավունք ե տալիս կառավարությանը սահմանելու «այն անձերի կատեղորիաները, վորոնք գրկում են ընտրելու և ընտրվելու իրավունքից՝ բավականաշափ բարոյական ու մտավոր հատկություններ չունենալու պատճառով»։

Դժվար չե հասկանալ, վոր լեհական պաների պատկերացմամբ այդպիսի «բարոյական» ու «մտավոր» հատկություններ չունեն հենց բանվորներն ու դյուդացիները։

Այսիմի անդամ ընտրված պատգամավորը պետք ե խոստում տա, վոր նա հոգալու յէ պանական լեհական պետության «արժանապատվության, ամբողջության ու հզորության» մասին։ Իսկ «խոստում տալուց հրաժարվելը, կամ վերապահումներով տրված խոստումը հավասարագոր ե մանդաւոր ընդունելուն»։

Սակայն այդ բոլոր վերապահումներն ել վոչնչացնում ե ընտրական այն որենքը, ըստ վորի պատգամավորի թեկնածու առաջադրել կարող են միայն ըլջանային ընտրական հանձնաժողովները, վորտեղ ֆաշիստական կառավարող չրջանների բյուրոկրատիայի համար անկասկած մեծամասնություն ե ապահովված։

Այդպիսի կերպարանք ունի կապիտալիստական ձևի «ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի ընտրական իրավունքը»։

Բայց ի հաճույս մի բուռն կառավարող մարդկանց, այդ ձևով հատկապես ջոկած պառլամենտն ել մեծ իրավունքներ չի վայելում, — չե՞ վոր «պետության գլուխ ե կանոնած հանրապետության նախագահը», վորը պատասխանատու յե վո՛չ թե ժողովրդի առաջ, այլ «ատածու և պատմության առաջ», — ինչպես այդ մասին ասում ե լեհական սահմանադրության 2-րդ հոդվածը։

Բուրժուական, նույնիսկ ամենադեմոկրատական սահմանադրությունների ելությունը յեղել ե հատկապես այն, վոր նրանք սրբադրում և պահպանում են հարուստի սեփականությունը։ Այդ պատճառով ել նրանք յերբեք չեն կարող իսկական դեմոկրատիա տալ ժողովրդի սեփականազուրկ մեծամասնության համար։ Նրանց հոչակած իրավունքներն ու աղատությունները մնում են ին միայն վորպես ձևական բաներ։

Բուրժուական սահմանադրությունները հոչակել են բոլոր քաղաքացիների հավասարություն որևէքի առաջ։ Այդ հավասարությունը բանվոր զասակարգի համար դարձել ե դատարկ հնչյուն,

վորավհետեւ այդ դասակարգը մնացել ե ընչաղուրկ դասակարգ, շահագործվող դասակարգ։

Բայց մինչև իսկ ձևական դեմոկրատիան ել ե սահմանադրական ված ու կրծատված բուրժուական հասարակության մեջ։ Վեց-մենք, որինակի համար, քաղաքացիների ընտրական իրավունքները։

Ժամանակակից բուրժուական սահմանադրությունների մեծամասնությունը հոչակում ե ընդհանուր ընտրական իրավունք։ Բայց այդ չի նշանակում, թե յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընտրելու և ընտրվելու։

Առաջին՝ շատ յերկիրներում, որինակ, ֆրանսիայում, Շվեյցարիայում և այլն, ընտրություններին մասնակցելուց դրկվում են կանայք, իսկ այդ արդեն բնակչության համարյա կեսն ե, վորը բուրժուազիան միանդամից անիրավահավաքար վիճակի մեջ ե դնում։

Յերկրորդ՝ ամեն տեղ ընտրական իրավունքներից զրկվում ե յերիտասարդությունը։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում ակտիվ ընտրական իրավունք (ընտրելու իրավունք) են վայելում 21 տարեկանից վոչ պակաս անձերը, իսկ պասսիվ ընտրական իրավունք (ընտրվելու իրավունք) են վայելում կոնցըեսի ընտրություններին։ 25 տարեկանից վոչ պակաս անձերը, իսկ անսատի ընտրություններին՝ 30 տարեկանից վոչ պակաս անձերը։ Նույնպիսի որենքներ են գործում նաև Ֆրանսիայում, միայն այն տարբերությամբ, վոր այնտեղ սենատի անդամ ընտրվել չեն կարող 40 տարեկանից փոքր անձերը։ Մի շարք այլ յերկիրներում (լեհաստան, Ռումինիա, Ֆինլանդիա և այլն) ակտիվ ու պասսիվ ընտրական իրավունքը վերապահվում ե միայն 24-25 տարեկան հասակից, ընդվորում լեհաստանում ընտրվելու իրավունքը վերապահվում ե միայն 30 տարեկան հասակից։

Մինչեւ կապիտալիստական յերկիրներում յերիտասարդությունը բոլորովին զրկվում ե ընտրություններին մասնակցելուց, և ՍՀՄ-ում նա լայնորեն մասնակցի և զարձվում պետության կառավարմանը. դյուզիոնը անդամների անդամների կազմի մեջ 350 հազար յերիտասարդ կա մինչեւ 25 տարեկան, քաղիորհուրդների անդամների կազմի մեջ՝ 36 հազար։

Յերրորդ՝ մի քանի յերկիրներում դոյություն ունի նաև գույքային ցենզ։ Ընտրելու իրավունք ունին միայն նրանք, ովքեր

պետությանը վորոշ, այն ել մեծ, յեկամտահարկ են վճարում, այսինքն՝ ունեռողները և վո՞չ թե բանվորները, վո՞չ թե չքավոր գյուղացիները:

Զորորդ՝ ընտրական իրավունքը սահմանափակվում է կրթական ցենզով: Որինակ, ԱՄՆ-ի Հարավային 5 նահանգներում 2, 2 միլիոն չափահաս նեղերից ընտրություններին մասնակցելու իրավունք և տրվում միայն 19 հազար մարդու. մնացածները զրկված են ընտրական իրավունքներից՝ անդիւրեն լեզուն չիմանալու պատրավակով:

Հինգերորդ՝ գոյություն ունի նստակեցության ցենզ: Ընտրություններին մասնակցելու իրավունք ունենալու համար պետք է տվյալ վայրում ասլրել առնվազն 6, 12 կամ մինչև իսկ 24 ամիս: Դրա հետեանքով ընտրական իրավունքներից զրկվում են գործադուրիները, վորոնք ստիպված են մի տեղից մյուսը չվել աշխատանք ճարելու համար, սեղոնային բանվորները և այլն:

Ել ի՞նչ է մնում այսպես կոչված ընդհանուր ընտրական իրավունքից՝ բոլոր այդ սահմանափակումներից հետո:

Սակայն այդ ել քիչ է: Բուրժուազիան իր տրամադրության տակ բազմաթիվ միջոցներ ունի, վորաքեսի բանվորների համար դժվարացնի իրենց ներկայացուցիչներին պառլամենտ անցկացնելու դորձը:

Նախ և առաջ ընտրական կամպանիաներին մասնակցելը կապված է հոկայական ծախսերի հետ: Այսպես, պրոֆեսոր Մյուրի հաշվարկումներով, պառլամենտի յուրաքանչյուր անդամի ընտրությունն Անդիւրայում նստում է միջին հաշվով 1.000 ֆունտ առերլինդ (6.000 ռուբլի վոսկով): Բանվորը վո՞րտեղից ճարի այդքան գումար: ԱՄՆ-ում նախադահի ընտրություններին մասնակցելը յերկու խոշորագույն (հանրապետական և դեմոկրատական) կուսակցություններից յուրաքանչյուրին նստում և ավելի քան 10 միլիոն դոլար (վոսկով 12 միլիոն ռուբլուց ավելի): Ինքնին հասկանալի յէ, վոր այդ անմատչելի յէ դարձնում ընտրական կամպանիային մասնակցելը նրանց համար, ովքեր միջոցներ չունեն: Ընդհակառակը, խոշորագույն կապիտալիստներն առատորեն դրամավորում են իրենց հաճելի թեկնածուների ընտրությունները:

Լայնորեն կիրառվում է ձայներ գնելը և ընտրողների վրա ձնչում գործադրելը: Ավելի ակնառու կերպով ցույց տալու հա-

մար, թե «այդ ինչպես ե կատարվում», բերենք ամերիկյան մի դոկտորի պատմում՝ ընտրություններին ցույց տված իր մասնակցության մասին:

«...Իմոյս նահանգի կոնգրեսի ընտրություններից քիչ առաջ, —պատմում ե նա, —ինձ մոտ, տուն յեկավ մի մարդ, վորին յերբեք կյանքում չելի տեսել:

— Դուք, կարծեմ, աղջիկ ունեք, և նա արդեն չորս տարի յե ինչ սպասում ե ուսուցչուհու պաշտոնի: — Յետ հաստատեցի: — Ահա թե ինչ, —ասաց իմ անկոչ հյուրը, —յեթե դուք քվեարկեք մեր թեկնածուի ոդտին, մենք կախատենք ձեր աղջկանը դործի դնել: Իսկ յեթե դուք քվեարկեք մեր հակառակորդի ոդտին, ապա այդ դեպքում յես ձեզ կարող եմ հաստատապես ասել, վոր վոչ մի ժամանակ ձեր աղջկին աշխատանք չի ստանա, նա յերբեք ուսուցչուհի չի լինի...»:

Այդպես ե բռնաբարվում ընտրողների կամքը բուրժուական դեմոկրատիայի յերկիրներում:

Բայց, մինչև իսկ այդ յեղանակով ընտրված պառլամենտն ել լիշտան տեր ու տնօրին չերկրում: Իրականում նրա իշխանությունը խիստ սահմանափակված է:

Նրա իշխանությունը սահմանափակված է, առաջին հերթին, վերին պալատի գոյությամբ, վորը կարող է գաղարեցնել ստորին պալատի կողմից ընդունված ամեն մի որենք: Իսկ վերին պալատը բոլոր կապիտալիստական յերկիրներում վոչ-դեմոկրատական ճանապարհով և կազմվում: Այսպես, Անդիւրայում լորդերի պալատը կազմված է գլխավորապես արիստոկրատական տոհմերի ներկայացուցիչներից՝ հերցոգներից, կոմսերից, վիկոնտներից և այլն, վորոնք պալատի կազմի մեջ են մտնում ժառանգական իրավունքի հիման վրա: Բացի դրանից, թագավորն իրավունք ունի լորդերի պալատի՝ ուզած թվով նոր անդամներ նշանակելու: Ճապոնիայում պերերի պալատը բաղկացած է 16 տոհմական արքայազնուներից, 13 իշխաններից և 30 մարկիզներից, կոմսերի 17 ընտրություններից, վիկոնտների 65 ներկայացուցիչներից և բարոնների 66 ներկայացուցիչներից: Դրանց ավելանում են 121 անձ, վորոնց, անհատական կերպով, կայսրն և նշանակում մատուցած «ծառայությունների համար» (մեծ մասսմբ մինիստրներից կամ խոշոր աստիճանավորներից), 64 ներկայացուցիչներ՝ տարեկան ավելի քան 300 յեն ուղղակի հարկ վճարող անձնավորություններից և ակադեմիաի 4 ներկայացուցիչներ:



Բացի դրանից, պառլամենտի իշխանությունը յերկիրների մեծ մասում սահմանափակված է թագավորի կամ նախագահի գոյությամբ, վորը, մասնավորապես, կարող է ցրել պառլամենտը: Կառավարությունը նույնպես մեծ մասամբ այս կամ այն շափով անկախ է պառլամենտից: Որինակ, Անդլիայում 1935 թվին վարչապետ Բողոքուինը ինքնուրույն կերպով մինիստրների կարինետի վերակազմություն կատարեց և նույնիսկ հրաժարվեց պառլամենտում այդ վերակազմության պատճառների հարցը քննարկելուց:

Այդպիսի պայմաններում պառլամենտը դատնում է «խոսաբան», իսկ իրական իշխանությունը պատկանում է նրանց, ովքեր պառլամենտի հետեւում են կանոնած—կապիտալի անթագակիր թագավորներին: Հենց այդ ել արտահայտել է Լենինն իր հակիրճ խոսքով—«կապիտալի ուժը ամեն ինչ է, բորսան ամեն ինչ է, իսկ պառլամենտը, ընտրությունները—դրանք մարդիոնետներ են, տիկնիկներ են...»*:

Համեմատեցեք կապիտալիստական այդ կարգերի հետ Խորհրդային Միության պետական կառուցվածքը: Մեզ մոտ գոյություն ունի ամենաղեմոկրատական ընտրական իրավունք—ընդհանուր, ուղղակի, հավասար ընտրություններ գաղտնի քվեարկությամբ: Մեզ մոտ չկա վոչ մի բացառում այդ որենքից:

Մեր յերկրում իրականացված է պետական իշխանության որդպանների՝ կապիտալիզմի հետ անհամեմատելի կառուցվածք: Մենք չունենք վերին և ներքին պալատներ: Դրանց փոխարեն ԽՍՀՄ-ի Գերագույն Խորհրդի կազմում գոյություն ունեն յերկու իրավահավասար պալատներ—Միության Խորհրդը և Ազգությունների Խորհրդը, վորոնց մեջ ներկայացված են վոչ միայն մեր յերկրի ամբողջ բնակչության ընդհանուր շահերը, այլև յուրաքանչյուր աղօտթյան շահերը: Մենք չունենք միանձնյա նախագահ—գործադիր իշխանության գլուխ՝ ժողովրդական ներկայացուցչությունից անկախ: Նրա փոխարեն գոյություն ունի ԽՍՀՄ-ի կոլեկտիվ նախագահ—Գերագույն Խորհրդի նախադահությունը, վորը լիովին հաշվետու յե Գերագույն Խորհրդին, ինչպես վոր նրան հաշվետու յե նաև Խորհրդային Միության կառավարությունը: Այսպիսով, ամբողջ իշխանությունը ԽՍՀՄ-ում կենտրոնացված է ժողովրդի ընտրյալների ձեռքին:

* Անին, Օ գոսударстве, Յերկ, հ. XXIV, եջ 376:

Այս բոլորից կարելի յե միայն մի հետեւություն անել—միայն մեր յերկրում է իրագործված «ղեմոկրատիա» հասկացողության խոկան ու տառացի խմասու, այսինքն ժողովրդի ինքնակալությունը:

«Դեմոկրատիան բուրժուական յերկիրներում, —ասել ե ընկեր Ստալինը, —...վերջին հաշվով դեմոկրատիա յե ուժեղների համար, դեմոկրատիա յե ունեսոր վորքամասնության համար: Դեմոկրատիան ԽՍՀՄ-ում, ընդհակառակը, դեմոկրատիա յե աշխատավորների համար, այսինքն՝ դեմոկրատիա յե բոլորի համար: Բայց դրանից հետեւում ե, վոր դեմոկրատիզմի հիմքերը խախտվում են վո՞չ թե ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրության նախադիմի, այլ բուրժուական սահմանադրությունների կողմից: Աչա թե ինչու յես կարծում եմ, վոր ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը միակ մինչև վերջը դեմոկրատական սահմանադրությունն ե աշխարհում»*:

ՍՑԱԽՆՑԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՄԵԼԱԴՐԱԿԱՆ ԱԿՏ Ե ՖԱՇԻԶՄԻ ԴԵՄ

Մինչև իսկ սահմանափակ բուրժուական դեմոկրատիան հը յելբուլական բուրժուական յերկիրների միայն մի փոքր մասում է պահպանվել: 26 յերկիրներից առնվազն 16-ը, այսինքն՝ բուրժուական Յելցինայի յերկու յերրորդը, Փաշիստական կամ կեռափաշիստական դիկտուրայի ուժիմ ունեն:

Ի գեմս Փաշիզմի բուրժուալիստ ժխտում է բոլոր դեմոկրատական ձգությունները: Փաշիզմի հարձակումը մի ցուցանիշ է այն բանի, վոր կապիտալիզմը չի կարող իր տիրապետությունը պահպանել նախկին «ղեմոկրատական» միթողներով:

Իսկ ի՞նչն է բուրժուալիստ տիրապետության Փաշիստական մեթոդների եյությունը:

Խորհուրդների VIII Արտակարդ համագումարում արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Մ. Ախովինովը տվեց Փաշիզմի դիպուկ և սրամիտ բնորոշումը: Նա ասում եր, վոր մի քանի բուրժուական յերկիրներում փորձեր են կատարվում կապիտալիզմի հակասություններից փրկելու մի նույնքան «հանձնարեղ», վորքան և հասարակ միջոցի ողնությամբ, —«Յերե չի

* Զեկուամ Խորհրդների համամիութենական VIII Արտակարդ համարում:

կարելի վերացնել գոյություն ունեցող դժգոհությունը և վերջինը ծնող պատճառները, ապա միանգամայն ենցու և վերացնել դժգոհներին (ընդհանուր ծիծաղ)։ բավական է քաղաքացիներին արգելել դժգոհություն արտահայտել, զրկել նրանց մտքեր, ցանկությունները ու պահանջներ արտահայտելու բոլոր միջոցներից, դրկել նրանց լրագրերից, ժողովներից, միություններից, կուսակցություններից, իսկ համառողների և առանձնապես՝ անցյալում մեղանչածների համար կառուցել և հարմարեցնել վորոշքով բանտեր և համակենտրոնացման նամբարներ, նաև կախաղաներ ու կառափնարաններ, իսկ բնակչության մի մասին՝ անհամապատասխան ծագում ունենալու պատճառվ, հայուարարել որենից դուրս և բնակչության մյուս մասի ձեռքը հանձնել քայլանելու ու կողոպտելու համար։ Այդ ել հենց կոչվում է ֆաշիզմ։

Ֆաշիզմը դեմոկրատիայի և ազատության բացարձակ ժըխություն է։

Ֆաշիստական տիրապետության դլիմոր դենքն աշխատավոր մասսաների հետ գաղանաբար դատաստան տեսնելն է, մինչև իսկ որենքով չնախատեսված ձևերով։ Ի՞նչպիսի «սահմանադրությամբ» կարելի յե հիմնավորել կալանավորված կոմունիստների և հակաֆաշիստների՝ առանց դատի ու քննության կտտանքներն ու սպանությունները։ Ի՞նչպիսի «սահմանադրություն» կարող է արդարացնել հակասեմիտական ջարդերը, վորոնք հիշեցնում են միջնադարյան ինկվիզիցիայի պատմության գատթարագործություն եցերը, և կամ մարդկային մտքի լավագույն ստեղծագործությունների հարապարակային այրումը։

Այն միջոցներից մեկը, վորոնցից ֆաշիզմն ուղարկում է կապիտալիզմի տիրապետությունը պահպանելու համար, —ուստայական և ազգային ճնշումն է։ Ֆաշիզմը ուստայական և ազգային անհայտարությունը հասցնում է ծայրահեղ աստիճանի։ Սրամասին կարելի յե դատել մինչեւ իսկ այն որենքների հիման վրա, վորոնք Գերմանիայում ուղղված են «վոչ-արիացիների» դեմ։

«Կայսրության քաղաքացիության որենքը», վոր հրապարակվեց 1935 թվին, բնակչությանը բաժանում է «պետության հարատակների» և «կայսրության քաղաքացիների»։ Քաղաքական իրավունքներ են վայելում միմիայն «կայսրության քաղաքացիները», իսկ «պետության հարատակները» զրկված են բոլոր քաղաքացիական իրավունքներից։ «Կայսրության քաղաքացիների» թվին

են պատկանում միմիայն «արիական ծագում ունեցող» անձերը, այսինքն՝ «գերմանական կամ նրա աղքակից արյունից սերված» անձերը և այն ել միմիայն նրանք, ովքեր ծառայում են ֆաշիստական ուժիմին։ «Գերմանական արյան և պատվի պաշտպանության որենքը» արգելում է ամուսնությունը հրեաների և «արիացիների» միջև։ «Վոչ-արիացիներին» պետական հիմնարկներում ծառայության չեն ընդունում, նրանց արգելում են ազատ պրոֆեսիալով զրադշելը և այլն։ Գերմանիայի խոչընական պարկերից շատերում աչքի յե զարնում «Հրեաների մուտքն արգելված է» մակագրությունը։ Շատերեր քաղաքում հրապարակվել ե հետևյալ հայտարարությունը։ «Հասարակական կարգը պահպանելու համար հրեաները կուռղ են բարդիք հաճախել միայն վորոշ ժամերի»։

Նշանակում է, Գերմանիայում բավական է մարդ ծնմի «վոչ-արիական» լնոտանիքում, վորպեսզի նա բոլոր իրավունքներից դրկված և իշխանությունների կողմից հալածվող մարդու դրության մեջ ընկնի։ Սակայն ինքնին հասկանալի յե, վոր այդ հալածանքները տեղում են նախ և առաջ բանվորների կամ աշխատավորների թվին պատկանող «վոչ-արիացիների» գլուխն։ Հրեական բուրժուազիայի համար Փաշիստներն ավելի կամ պակաս տանելի դոյություն են ապահովում և այնքան ել չեն գարշում նրանցից։

«Վոչ-արիացիների» գեմ ուղղված իրենց գաղանային որենքները «հիմնավորելու» համար Փաշիստներն ստեղծել են ուսացական «թեորիան»։

Այդ թեորիան ժողովրդականացնողներից մեկը՝ Հերման Գաուխը, որինակ, իր «Ծասաների վերաբերյալ գիտության նոր սկզբունքները» դրքում այսպիսի «Հայություններ» է անուան։

«Վոչ-հյուսիսային ցեղին պատկանող մարդու ատամների արմատներն այնպես են դասավորված, ինչպիս կենդանիներինը։ Հյուսիսային ցեղին պատկանող մարդը կերպուրը ծամում և փակած բերանով, մյուս ցեղերին պատկանող մարդիկ վորոնում են։ ինչպիս կենդանիները . . . վոչ-հյուսիսային մարդը գիշատիչի նման չպացնում և շրջումներով—այդ նրա բնորոշ գիծն է։ Վոչ-հյուսիսային ցեղին պատկանող մարդը անցումնային աստիճանն է մարդուց գեպի կենդանին։ Նա ավելի մոտ է կապկին, քան մարդու։ Նրան չի կարելի մարդ ամվանել՝ բառիս լրիվ իմաստով։»

Ժամանակակից Փաշիստների արարքներին լիովին սակում են հակասեմիտիզմի մասին ընկեր Ստալինի առաջ վոչնացնող

խոսքերը։ Պատասխանելով Հրեական հեռագրական դորժակալության՝ Ամերիկայից ուղղած հարցումին, ընկեր Մտալինը գրել է 1931 թվին։

«Ազգային ու ցեղային շովիճիզմը կանխիբալիզմի ժամանակաշրջանին հատուկ մարդատյաց բարեկրի մնացուկն է։ Հակասեմիտիզմը, վորպես ռասայական շովիճիզմի ծայրահեղ ձև, կանխիբալիզմի ամենավտանգավոր մնացուկն է։ Հակասեմիտիզմը ձեռընտու յե շահագործողներին, վորպես կապիտալիզմն աշխատավորների հարվածի տակից դուրս բերող շանթարգել։ Հակասեմիտիզմը վտանգավոր ե աշխատավորների համար վորպես կեղծ արակետ, վորը նրանց նիշտ նանապարհից շեղում և նրանց դեպի զունդիկներն ե բերում։ Այդ պատճառով կումունիստները, վորպես հետևողական ինտերնացիոնալիստներ, չեն կարող հակասեմիտիզմի անհաշտ և վոլյուպտիմ թշնամիները չի հնիլ...»*։

Կաննիբալիզմի ժամանակաշրջանին հատուկ այդ մարդատյաց բարքերը գերմանական ֆաշիստները վերստեղծեցին այն յերկրում, վորը յերեսմն Յելլոպայի սմենակուլտուրական յերկրներից մե՛կն եր համարվում։

«Գերմանական ֆաշիստները, իիրավի, արժանացան ժամանակից կաննիբալների, մեր լեզվով ասած՝ ժամանակակից մարդակերների հերոսորատական փառքին, —իրավացիորեն ասում եր ընկեր Մոլոտովը Խորհուրդների VIII Սրտակարգ Համագումարում։

Ինքնըստինքյան համականալի յե, վոր XX դարի մարդակերներին ժողովրդավան ներկայացուցչության որդաններ հարկավոր չեն։ Այն, ինչ վոր մնացել ե այդ որդաններից, այլ կերպ չի կարելի անվանել, բայց յեթե ծաղրուծանակ։

Ահա, որինակ, գերմանական ռայխստագը (պառլամենտը)։ Այն մասին, թե նա ինչ ե ներկայացնում իրմանից, կարելի յե դատել, անցյալ գումարման ռայխստագի «գործունեյությունից»։ Այդ ռայխստագը հետեյալ նիստերն ե ունեցել։

1. 1934 թվի հունվարի 30-ի նիստը։ Գյորինդի ճառը։ Հետերի ճառը կառավարության անցյալ և ապագա նվաճումների ժամանակ։

2. 1934 թվի հունվարի 13-ի նիստը։ Գյորինդի ճառը։ Հետերի ճառը։

3. Ուղուստոսի 4-ի հանդիսավոր նիստը՝ նվերված վախճանված նախագահ Հինդենբուրգի հիշատակին։ Յերաժշտական համարներ։ Հիտլերի ճառը։

4. 1935 թվի մայիսի 21-ի նիստը։ Գյորինդի ճառը։ Հետերի ճառն արտաքին քաղաքական դրության առթիվ։

5. 1935 թվի սեպտեմբերի 15-ի նիստը՝ նվերված կուսակցության Նյուրենբերգի համագումարին։ Գյորինդի յելույթը։ Հիտլերի ճառը։

6. 1936 թվի մարտի 7-ի նիստը։ Գյորինդի յելույթը։ Հետերի ճառը Լոկարնոյի պայմանագիրը Եղյալ հայտարարելու ժամանակին։ Ռայխստագի ցըս։

Յեկ այսպես, իր գոյության յերեք տարվա և յերեք ամպար ընթացքում ռայխստագը միայն վեց անգամ է գումարվել։ Պարոնայք պատգամավորները իրենց «պատլամենտական պարտականություններով» գրադած են յեղել ընդամենը 10 ժամ և 40 րոպե։ Նրանցից վո՞չ մեկը վո՞չ մի անգամ հանդես չի յեկել։ Նրանց «գործունեյությունը» սահմանափակվել ե այն բանով, վոր նրանք լսել են Հիտլերի ու Գյորինդի մի քանի ճառերը և հինգ անգամ ձեռք են բարձրացրել։

Ռայխստագի այդպիսի «կարկառուն» գերը նկատի ունենալով, իրենք Փաշիստներն արդեն չեն վմտահանում Գերմանիայի պետական կարգը բնորոշել վորպես հանրապետական կարգ։ Վերջերս լրագրերում հաղորդագրություն յերեաց այն մասին, վոր 1936թ. նոյեմբերին Փաշիստական կուսակցության մարզային զեկավարների կոնֆերենցիայում հանդես ե յեկել ներքին գործերի մինիստը Ֆրիկը։ «Արդի Գերմանիան, —պարզաբանել ե Ֆրիկը, —վո՞չ հանրապետություն ե և վոչ ել միապետություն, նա «առաջնորդական պետություն» ե։ Վերը՝ անհատանելի բարձրության վրա կանգնած ե առաջնորդը, իսկ նրա տակ—պետությունը, վորը միայն գործիք ե նրա մեծ պահները կատարելու համար»։

Այս ել ձեզ «դեմոկրատիա»։

Այդ հաղորդագրության կողքին լրագրերում տպադրվեց նույն որը Գերմանիայից ստացված մի ուրիշ լուր։ Այդ լուրը հաղորդում եր, վոր մսի և ճարպերի պակասությունը Գերմանիայում ավելի ու ավելի յե նկատելի դաշնություն։ Սիլեզիայում անհարին ե

* Ընկեր Մոլոտովը կարդաց Խորհուրդների VIII Սրտակարգ համագումարում արտասահմած իր ճառի ժամանակ։

Ֆինչե իսկ մարդարին ճարել: Զուն նույնպես շուկայում հաղվա-
դեպ և յերեսում: Բրեսլավում վերջին որերս 25 մսագործ ստիլ-
ված յեղան, ապրանք չլինելու պատճառով, խանութները փակե-
լու: Նրանցից միքանիսին Փաշխստական իշխանությունը ձերբա-
կալեց այն բանի համար, վոր նրանք ցուցաբեկերում հայտարա-
րություն ելին կախել, թե «Խանութը փակ է միս չլինելու պատ-
ճառով»:

Այս լուրերի գուգաղբումը, թերեւ, ամենից լավ է մերկաց-
նում այդ «առաջնորդական պետության» եյությունը: «Առաջնոր-
դական պետություն» ցուցանակի տակ Գերմանիայում խոչը ֆի-
նանսական կապիտալի արյունոտ դիմումուրան է թագնված, իսկ
ինքը Հետուերը «միայն մի դործիք ե» նրա պլանները կատարելու
համար:

Իսկ թե այդ լնչպիսի պլաններ են, այդ մասին ամենից լավ՝
վկայում է գերմանական Փաշիզի արտաքին քաղաքականության
ուղղությունը և նրա լողունդը—«Մսի փոխարեն՝ թնդանոթ»: Ար-
յունալի իմպերիալիստական սպանդի նախապատրաստում, հար-
ձակում Խորհրդային Միության վրա՝ «կոմունիզմի դեմ պայքա-
րելու» քողի տակ—ահա այդ քաղաքականության եյությունը:

ԽՍՀՄ-ի ստալինյան նոր Սահմանադրությունը ցույց է տա-
լիս ամբողջ աշխարհին, վոր սոցիալիզմը խվախան ազատություն
և իրավահավասարություն ե բոլոր քաղաքացիների համար: Բառ
Սահմանադրության—«իրավունքների վորեւեցե ուղղակի կամ ան-
ուղղակի սահմանափակումը, կամ ընդհակառակը, ուսայական ու
աղդային պատկանելությունից յենելով քաղաքացիների համար
ուղղակի կամ անուղղակի առավելություններ սահմանելը, ինչ-
պես նաև ուսայական ու աղդային բացառիկության կամ ատելու-
թյան ու արհամարհանքի ամեն տեսակ քարող—պատժվում են
որենքով» (ԽՍՀՄ-ի Սահմանադրության 123-րդ հոդվածը): Թող
իմանան աշխարհի ճնշված ժողովուրդները, վոր ԽՍՀՄ-ն վոչ մի-
այն չի թույլատրում աղդային վորեւե անիրավահավասարություն,
այլև ուսաների ու աղջերի անիրավահավասարության Փաշխստա-
կան «թեորիան» հայտարարում և վորպես հանցագործություն,
վորը պատժվում ե մեր սոցիալիստական որենիով:

Նոր ստալինյան Սահմանադրությունը ցույց է տալիս աշ-
խարհի բոլոր աշխատավորներին, վոր սոցիալիզմը—այդ խաղա-
ղություն ե, այդ—ապահովված, ազատ գոյաւթյուն ե բոլոր աշ-

խատավորների համար, այդ—գիտության ու արվեստի բարգա-
վանումն ե:

ԽՍՀՄ-ի ստալինյան նոր Սահմանադրությունը, վոր առ-
դրված է մարդու մասին հոգացողության վոգով, մահացու հար-
ված է հասցնում Փաշխստական մարդատեցությանը, ժամանակա-
կից մարդակերների ուսայական «թեորիաներին»:

«ԽՍՀՄ-ի նոր Սահմանադրությունը բարոյական ոգևորթյուն
և իրական ոժանդակություն կլինի բոլոր նրանց համար, ովքեր
այժմ պայքար են մղում փաշխստական բարբարոսության դեմ»*:

* Ստալին, Զեկուցում Խորհուրդների համամելութենական VIII Սրբակաբե-
համակառում:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Ստալինյան Սահմանադրության 118-րդ հոդվածն ասում է.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիներն ունեն աշխատանքի իրավունք, այսինքն՝ ապահովված աշխատանք ստանալու իրավունք, նրանց աշխատանքը վարձատրելով նրա քանակի ու փորձի համապատասխան»...

Սոցիալիստական պետությունն ապահովում է աշխատանքը իր յուրաքանչյուր քաղաքացու համար, ընդորում մեր քաղաքացիների աշխատանքը վարձատրվում է կատարված աշխատանքի քանակի ու փորձի համեմատ:

Այդպիսով աշխատանքի իրավունքն այն է, վոր ԽՍՀՄ-ի ամեն մի քաղաքացի ուղած ժամանակ կարող է գործի մտնել և իր աշխատանքի համար նաև միշտ ստանում է արժանի հատուցում:

Այս հոդվածում գրի յե առնված պրոլետարական հեղափոխության մեծագույն նվաճումներից մեջ, վորն արդեն կյանքում իրադորձված է: ԽՍՀՄ-ի քաղաքացիներից յուրաքանչյուրն արդեն այժմ լրիվ չափով իրազործում է աշխատանքի իր իրավունքը: Մեզ մոտ գործադրություն չկա, մեզ մոտ ամեն մի մարդ աշխատանք է ստանում և վորքան նաև լավ է աշխատում, վորքան ամելի հմտություն, փորձ, գիտելիքներ ե ցուցաբերում, այնքան ավելի յե վաստակում, այնքան ավելի ունեոր կյանքով և նաև ապրում:

Մեր յերջանիկ ժամանակներում ապրող խորհրդային յերիտասարդությունը գաղափար անդամ չունի աշխատավորի մի այլ վիճակի մասին:

Ուստի, խոսելով ԽՍՀՄ-ի քաղաքացիների աշխատանքի իրավունքի մասին, մենք պետք ե հիշեցնենք այն մասին, թե ինչպիսի անողոքությամբ ե վոտնահարվում մարդու աշխատանքի իրավունքը բուրժուական հասարակության մեջ, վորը հիմնված է

մարդու ձեռքով մարդուն անզուսպ շահագործելու վրա, Հայութաների ձեռքով չքավորներին կողոպտելու վրա:

Կապիտալիզմն սկսում է մարդուն կողոպտել մանկությունից: Պրոլետարին ստիպված է իր տղաներին ու աղջիկներին դորձարան ուղարկել դեռ մանուկ հասակից, —նրա աղքատիկ աշխատավարձը չի բավականացնում ընտանիքը կերակրելու համար: Այդպատճառով ել կապիտալիստական պետության մեջ բանվորի յերեխան տառ տարեկան հասակից պետք է ինքը ձեռք բերի իր հացը:

Կապիտալիստները հայտաբարում են, վոր իրենք յերեխաների աշխատանքը թույլ են տալիս միմյայն մարդասիրությունից դրդմած, մինչդեռ իրոք յերեխաների աշխատանքի կիրառումը յերեխաների դաշտան, գաղանային շահագործումն ե, —յերեխաների աշխատանքը և յերիտասարդության, հատկապես կնոջ աշխատանքը, միշտ ել գնահատովել ե և գնահատովում է ավելի եժան, քան մեծահասակ մարդու աշխատանքը: Գործարանատերը կրկնակի ոգուտ է ստանում վոչ միայն այն պատճառով, վոր զրոյներ և վճարում յերեխաներին: Գործարանատերը միաժամանակ իջենում և նաև մեծահասակ բանվորի աշխատավարձը, վորչափով յերեխաների աշխատանքը մրցում և մեծահասակների աշխատանքը հետ:

Մուկվայի նահանդի գործարանների հատումկ հետազոտության տվյալներով՝ ցարական Ռուսաստանի բոլոր բանվորների մի յերբորդը գործարաններում աշխատել է սկսել 12 տարեկան չդաշտած (նրանցից 10 տոկոսը մտել է գործարան դեռևս 10 տարեկանից վո՞քը հասակում): Մյուս մեկ յերբորդն սկսել է աշխատել 12—14 տարեկան հասակում: Յեկ բանվորների միայն մի յերբորդն է սկսել աշխատել 15 տարեկան հասակից*:

Մի ամբողջ շարք պլոտիկեսիաներ կապիտալիստական գործարանում գլխավորապես յերեխաներն եյին լրացնում: Այսպես, ցարական Ռուսաստանի տեքստիլ գործարաններում կցանուէիների (որոշուածական) մեջ 15 տարեկան չդաշտած յերեխաների թիվը կազմում եր 90 տոկոս, կոճապանուէիների մեջ (ուղարկուածական) 56 տոկոս, վատերպականուէիների (վատերպական) մեջ 54 տոկոս:

* «Сборник статистических сведений по Московской губ., отд. санитарной статистики, т. IV, часть 1-ая, стр. 288.

ձիւտ ե, ցարական Ռուսաստանի որենքները ձևականորեն արդելում եյին 12 տարեկանից փոքր յերեխաների աշխատանքի կիրառումը: Սակայն գործարանատերերը միշտ ել բոլորովին անպատճի կերպով խախտում եյին այդ որենքները:

Հին ժամանակ Ռուսաստանում խիստ տարածված եր ծննդականներն ու անցազերը կեղծելու սովորությունն այն նպատակով, վոր այդ փաստաթղթերում յերեխաների տարիքը բարձրացվեր 2-3 տարով: Ծննդականների և անցազերի այդպիսի կեղծումը յեկամտի եյական աղբյուր եր տերտերների ու վոլոստային գրադիրների բյուջեյում:

Տրյոխորնի մանուքակտուրայի հին բանվորուհի կոմիսարովան, որինակ, պատմում է. յերբ նա գործարան եր ընդունվում, նրա հայրը գնում է Մոսկվայի իշերսկայա մատուրը և աղջկա տարիքին 2½ տարի յե ամելացնում, գրա համար վճարելով...50 կոպեկ:

Բժիշկ Լիբերմանը, վորն ուսումնասիրել ե հանքերում փոքրահասակների կատարած աշխատանքի վելաբերյալ որենքներէ կիրառումը, դրել ե.

«Դժգույն, հոգնատանջ, ամբողջովին մրուգած դեմքեքով, սևացած ձեռքերով, չափից դուրս յուղուտված, նրանք շարժվում են տասնապետաների աջալուրջ հսկողության ներքո: Նրանց մեծամասնությանը դժվար է մինչև 13 տարի տալ, ամեն քայլափոխում հանդիպում են 11 տարեկան յերեխաներ: Սակայն յեթե դուք մեկն ու մեկից հարցնեք, թե քանի տարեկան է, ի գարմանաձեր, նա ձեզ կապատասխանի՝ «տասնհինգ»:

Ընկնելով բարբառասական շահագործման անտանելի պայմանների մեջ, յերեխաները դործարաններում հաղարներով վոչնչանում կամ թե հաշմանդամ եյին գառնում: Գործարանային տեսուչ գլողդյումն այսպիս ե զրի առել իր տպավորությունները Դուլեվի դործարանն այցելելիս: «Այստեղ յես հանդիսեցի փոքրահասակների, վորոնց տեսքը սոսկալի տպավորություն եր գործում. մոմի գույն տարացած այդպիսի հոգնատանջ գեմքեր, խորը փոս ընկած աչքերով, աչքերի տակը բոլորովին կապույտ, դուք վո՞չ մի մեղ չեք հանդիսի»:

Ահավասիկ բուրժուական «Русские Ведомости»-ի թղթակցի վկայությունը.—լրադի աշխատակիցը, վարը դիտում եր Ռեպմարի 40—50 տարինան բարեխառնության մեջ բանող յերեխաների աշխատանքը, հարցնում է գործարանատիրովից: «Հե-

տագայում ի՞նչ մարդիկ են դուրս գալիս այս լղբճուկի յերեխաներից, վորոնք աշխատում են չորացման թմբուկների վրա, կաշարանում և շողեհարման բաժնում»:

«Նա, փոքր ինչ մտածելուց հետո,—պատմում է լրադրի ոչ-խառալիցը, —այդպիսի պատասխան տվեց ինձ.

— Ասոված դիտե, թե դրանք ուր են կորչում, մենք կարծես հետո այլևս դրանց չենք տեսնում:

— Ի՞նչպես թե չեք տեսնում:

— Հենց այնպես, թառամում են նրանք:

— Դուք ուզում եք ասել, վոր հետազյում նրանք փոխո՞ւմ են իրենց զբաղմունքների տեսակը կամ ուրիշ գործարան են անցնում:

— Վո՞չ, պարզապես թառամում են, բոլորովին թառամում են, —պարզ պատասխանեց գործարանատերը:

Մեզ մոտ, սոցիալիստական յերկրում, շահագործումը տեղ չունի: Յերեխաների աշխատանքը մեղ մոտ բոլորովին արդելուծ է: Յերեխաների աշխատանքի կիրառումը պատժվում է դատարանով: Ասենք բանվորն ու գյուղացին կարիք ել չունեն իրենց յերեխաներին փաղ հասակից գործարան ուղարկելու, —բանվորի աշխատավարձը նրան հնարավորություն է տալիս իր յերեխաների կրթությունն ապահովելու:

Գնացեք մեր խորհրդային դպրոցը, 9-րդ, 10-րդ դասարանները: Դուք այնտեղ կտեսնեք բանվորների ու գյուղացիների 17-18 տարեկան հասակի տասնյակ հազարավոր յերեխաներ: Նրանք սովորում են՝ պատրաստվելով աշխատանքային կյանքի ուղին բոնել զպրոցն ավարտելուց հետո միայն: Նրանցից շատերը չեն այն մասին, վոր մինչև Մեծ պրոլետարական հեղափոխությունն ընկնող դարաշրջանում ապրող իրենց հասակակիցները նրանց տարիքում արդեն հաշմանդամացել, ուժասպառ եյին յեղել կապիտալիստական գործարանում կատարած հյուծիչ աշխատանքից:

Մեր հասունացող սերունդը կզնա սոցիալիստական գործարանների ցեխերը դպրոցն ավարտելուց հետո միայն, յերբ նա Փիղիկապես կամրանա, դիտելիքներ ձեռք կրերի: Նա ստիպված է ինի աշխատանք վիճառելու, —պետությունը ապահովում է աշխատանքը մեր յերկրի յուրաքանչյուր յերիտասարդի համար:

Ցարական ժամանակում այդպիս չեր: Կապիտալիստը բան-

վորի համար աշխատանքի իրավունքը չի ապահովում։ Մարդու վիճակը կախված է գործատիրոջ կամայականությունից։ Նա կարող է բանվորին աշխատանք տալ, բայց կարող է և չտալ։ Ամեն բան կախված է այն բանից, թե այլալ մոմենտին այդ վորքան շահավետ է կազիտալիստի համար, մանավանդ վոր յուրաքանչյուր ազատ տեղի համար բազմաթիվ ցանկացողներ կային։

կառիտալիոմի յերկիրներում այժմ ել դըությունը նույնն եմնացել:

Աղջերի կիզայի տվյալներով, կատիտալիստական յերկրներում այժմ 6-7 միլիոն «ալելորդ մարդկեկ», յերկտասարդ գործադրութեան համար բացի դրանից, շատ ու շատ միլիոն յերկտասարդ գործադրութեան համար կան, վորոնք իրենց ամբողջ կյանքում դեռ վոչ մի անգամ աշխատանք չեն ունեցել:

Ապագլուխ այն բանից, վեր աշխատող ձեռքսրբ առաջարկը
կապիտալիստական յերկիրներում մէջտ գերազանցում է պահան-
ջարկեց, կապիտալիստները ծաղրում եցին բանվորներին։ Աշխա-
տանք ստանալու համար բանվորը պետք է ամեն կերպ ստորանար,
կաշառք տար գործատիրոջ ծառաներին—վարպետներին, ընդու-
ներ ամեն մի ստրկական պայման։

Կապիտալիստները բանվորներին դարձում ենին իրենց ստրուկտուրան միջնորդներից մեկն ել անցագործի զրոյական երեսը : Սարկացման միջնորդներից մեկն ել անցագործի զրոյական երեսը : Առաջարկությունը հանդիսանում էր, նրա անցագործի վրա կնիք եյխան թեթև բանվորը հեռանաւում էր, նրա անցագործի վրա կնիք եյխան խփում և այնուհետեւ վոչ մի գործարան նրան չեր ընդդեմում :

Յարական որենքն ուղղակի սառւ եր.
 «Վարձման ժամկետը լրանալուց առաջ կամ թե անորոշ ժամանակով վարձվելու դեպքում առանց գործատիրողը և շարապ-
 առաջ նախազգուշացնելու ինքնազլուխ կերպով աշխատանքից
 հրաժարվելու համար մեղավոր գործարանային բանվորը կալան-
 վորման և յենքարկվում վոչ ավելի, քան մի ամիս ժամանակով՝
 (Արդյունաքերության կանոնագրքի 514-րդ հոդվածը):

Յեթե բանվորը, տանջված անլուր չահպործումից, իր ամբողջ եյությամբ ձգտում եր ժամկետից առաջ հեռանալ դործարանից, նրան չեյին վճարում իր վաստակած դրամը։ Գործարանատեր Շլիպալեյի ներքին կարգի կանոններում ուղղակի գրիված է. «Յեթե բանվորը ժամկետից առաջ հեռանա, այդ գեղագում ստանում ե ամբողջ ժամանակվա համար պայմանադրված վարձատրության կեսը»։

«Города России в 1910 году» տեղեկատուից իմանում ենք, զոր այդ ժամանակ Մոսկվայում յեղել և 15 թատրոն, 16 գրադարան, 3 ժողովրդական տուն, 1 կրկես : Սակայն դրա հանդեպ յեղել են 416 յեկեղեցի, 46 աղոթատուն, 62 մատուռ, 26 վանք : Միաժամանակ յեղել և 247 պետական ողետուն, 291 պանդոկ, 360 գինետուն, 789 գարեջրի խանութ և այլն :

Համեմատության համար ավելացնենք, վոր արդեն 1935 թվականին Մոսկվայում կար 50 թատրոն, ուր մի տարում հաճախել են 13 միլիոն մարդ : Նույն տարում Մոսկվայում կար 445 կինո, այսինքն՝ Ռուսաստանում 1914 թվին գոյություն ունեցող բոլոր կինոթատրոնների համարյա կերպը :

Իվանովո-Վոզնեսենսկում, վորն ուներ 10 հազար բնակչություն, 1910 թվականին կար 3 գրադարան, 2 ժամանակավոր կրկես (բալագան) և 2 ակումբի բեմ ու միաժամանակ 14 յեկեղեցի, 3 մատուռ, 1 վանք, 1 աղոթատուն և 87 գարեջրի խանութ (1935 թվականին Իվանովոյում կար 5 թատրոն, 27 կինո և 64 գրադարան) :

Իժեվսկի գործարանի բանվորական ալյանսում 1910 թվականին կար 2 ակումբի բեմ, չկար վոչ մի թատրոն, վոչ մի կրկես, վոչ մի թանգարան : Սակայն այնտեղ կար 11 յեկեղեցի, 1 աղոթատուն, 1 մատուռ և 72 գարեջրի խանութ (1935 թվականին իժեվսկում կար 3 թատրոն, 12 կինո, 23 ակումբ և 15 մասսայական գրադարան) :

Այդպիսով կապիտալիստներն ու կալվածատերերը ձգտում եյին ամեն միջոցով բթացնել աշխատավորներին, նրանց գլուխը լցնել կրոնական հաշվով, թունավորել նրանց ուղեղն ողիով :

Յերիտասարդության մեջ տարածվել եյին զանազան սնահագատություններ և վայրագ բարքեր : Առանձնապես մեծ վայրագություն եր ցուցաբերվում կնոջ վերաբերմամբ, վորը ցարական ուրենքներով վոչ այլ ինչ եր, բայց յեթե իր ամուսնու ստրկություն :

Ահա դեպի կինը ցույց տրվող բարբարոսական վերաբերմունքի այդպիսի գեղագերից մեկը, վոր նկարագրել է Մաքսիմ Գորկին իր «Վայում» կարճ պատմվածքում —

«Գյուղական փողոցով, սպիտակ խրձիթների միջով, վայրենի վունցով շարժվում ե մի տարորինակ թափոր :

Գնում ե ամբոխը, գնում ե խիտ շարքերով և դանդաղ քայլերով, շարժվում ե ինչպես մի մեծ ալիք, իսկ նրա առաջից գնում ե գլուխը խեղճ-խեղճ կախած մի քոսուր, լըրճուկ ձի . . .

Զեռքերը թոկով սայլի առաջքին ե կապած մի փոքրիկ, բոլորին մերկ կին, համարյա աղջիկ : Նա զնում է ինչ-վոր տարուրինակ կողքի, խիտ ու զգացված մուգ շագանակագույն մազերով ծածկված նրա գլուխը զեղի վեր և ցցված և փոքր ինչ զեղի հետ և ընկած, աչքերը լայն բացված, նայում են զեղի հեռուն բութ ու անմիտ հայացքով, վորի մեջ չկա մարդկային վոչ մի բան . . . նրա

ամբողջ մարմինը ծածկված ե կապույտ ու բոստրագույն կլոր ու յերկարավուն բծերով, նրա առաձգական կուսական ձախ ստիճառ պատոված ե և արյուն է ծորում... Արյունը բոստրագույն չերտ ե կազմել վորովայնի վրա ու ցածը՝ ձախ վոտքի վրա մինչև ծունկը, իսկ սրունքի վրա արյունը ծածկված ե փոշու դարշնագույն շերտով։ Կարծես թե այդ կնոջ մարմնից կտրված-հանված ե մաշկի նեղ ու յերկար մի շերտ ու, յերկի ծղանով յերկար խիթել են այդ կնոջ վորովայնին, վորը ահոելի չափով ուռած ե և ամբողջովին սոսկալի կամրտած։

Այդ կնոջ վայելչակաղմ ու փոքր վոտքերը հազիվ են շարժ-գում փոշու վրայով, ամբողջ իրանը սարսափելի կորացած ե և ուրովում ե ու վո՛չ մի կերպ չի կարելի հասկանալ, թե ինչո՞ւ այդ կինը դեռևս վարողանում է կանգուն մնալ այդ վոտքերի վրա, վորոնք ամբողջովին, ինչպես և նրա մարմնը, ծածկված են կապուտկներով, թե ինչո՞ւ նա գետին չի ընկնում և, ձեռքի վրա կախված, սայլի հետեւից քարշ չի գալիս փոշու ու տաք գետնի վրայով...

Իսկ սայլի վրա կանգնած ե բարձրահասակ, սպիտակ բլուզով մի մուժիկ, գլխին դրած սև մորթե գդակ, վորի ստակից ճակատի վրա կախված են թունդ շեկ մազերը։ Մի ձեռքով նա սանձերն ե պահում, մյուսով՝ մտրակը, և նրանով մեթոդիկ կերպով չպարացնում է մեկ ձիու մեջքին, մեկ ել այդ փոքրիկ կնոջ մարմնին, վորն առանց այն ել արդեն ջարդված է մարդկային կերպարանքը կորցնելու աստիճան։ Եփահանը մուժիկի աչքերը լցված են արյունով և փայլում են չարախինդ։ Մարդկային կանգնած կանգիսավորությամբ։ Մազերը նրա աչքերին կանաչավուն գույն են տալիս։ Մինչև արմունկները քշտած բլուզի թերերի տակից բացվել են ամուր բազուկները՝ շիկակարմիր խիտ բրդով ծածկված։ Նրա բերանը բաց ե ու լիքը սուր սպիտակ աստամերով, և մերթ ընդ մերթ մուժիկը խոպոտ ձայնով դռուում ե...

— Դե՛հ... Զադո՛ւ։ Հը՛։ Դե՛հ։ Հը՛։ Մե՛կ...

Իսկ սայլի ու նրա վրա կապած կնոջ հետեւից ժողովուրդը խոնչած գնում ե և նույնպես գոռում, սուլում, ծիծաղում ե, հո՛ւյ և անում, գրգռում ե... Վազում են յերեխաները... Յերբեմն նրանցից մեկը ու մեկը վազում ե առաջ և կնոջ յերեսին բարձրաձայն անպատճառ խոռքեր ե նետում։ Այդ ժամանակ ամբոխի մեջ բարձրացած թնդալից ծիծաղը լիլացնում ե բոլոր մյուս ձայները

և մարակի բարակ շաչյունն ողում... Գնում են կանայք բորբոքված գեմքերով ու բավականությունից փայլող աչքերով... Գնում են աղամարդիկ և ինչ-վոր զղիելի բաներ են զոսում սայլի մեջ կանգնածին... Նա դառնում է դեպի նրանց և հոհուում է՝ բերանը լայն բացած։ Նորից իջնում է մտրակի հարվածը կնոջ մալմնին.. Բարակ ու յերկար մտրակը փաթաթվում է ուսին և ահա նա շրպագ կոնստակին... Այն ժամանակ ծեծող մուժիկը ուժով թափ է տարիս՝ քաշում է մտրակը դեպի ինքը. կինը աղիողորմ ջում է և, չուռ գալով, մեջքի վրա ընկնում է փոշու մեջ... Ամբոխի միջից շատերը մոտ են վաղում դեպի կինը, կուանում նրա վրա, այնպես լոր այլևս նա չի յերեսում։

Զին կանգ է առնում, բայց միքանի լուսելից հետո նա նորից ե գնում, իսկ ջարդված կինը, առաջմա պես, սայլի հետեւից առաջ է շարժվում...»

Ինոջն այսպիսի բարբարոսական վերաբերմունք ցույց տալը սովորական յերեսույթ եր ցարական Ռուսաստանի հետամնաց ու խամելար դյուլում։ Կարիք կա՞ արդյոք սպացուցելու, վոր մեր ժամանակ կինը դարձել է ԽՍՀՄ-ի ժողովուրդների ամեն մի բան-վորական, գյուղացիական ընտանիքի իրավահավասար աշխատավորը, վոր մեր ժամանակ կինը թե՛ քաղաքում, թե՛ դյուլում ողտըլում ե բոլոր իրավունքներից։ Խորհրդային որենքներն արթուն հսկում են կնոջ իրավահավասարությանը, ոգնում են խորհրդային ընտանիքի ամբացմանը, պահպանում են մոր ու մանկան առողջությունը։

Ցարական Ռուսաստանի կապիտալիստներն ու կալվածատերերը ջանում են աշխատավորների գլխից ամեն կերպ արժատափակի անել մարդկային դիտակցությունը, աշխատելով նրանց մակարդակին իջեցնել-հասցնել կիսավայրենի եյակների մակարդակին, յենթալրում ելին, թե թուլակաղմ, անկուլտուրական բանվորներն ու դյուղացիները հայիստյան հնագանու կմնան նրանց։

Պրոլետարական և չքավոր ընտանիքների ծանր տնտեսական պայմաններն առաջ եյին բերում յերեխաների հսկայական մահացություն։ Ծննդած յերեխաների մի քառորդը մեռնում եր կյանքի առաջին տարում։ Պերմի նահանգում, որինակ, մինչև մի տարեկան հասակի յերեխաների մահացությունը կազմում եր ծնվածների համարյա 40 տոկոսը։ Ցարական կառավարությու-

նը վոչինչ չեր անում յերեխաների առաղջությունը պահպանելու համար, նրանց ամբողջ հոգու թողնելով մասնավոր բարեգործության: Ստեղծված եյին տասնյակ ու հարյուրավոր զանազան «ընկերություններ», «Հողաբարձություններ», «կոմիտեներ», «Հանձնաժողովներ», վորոնք գտնվում եյին զանազան «մեծ իշխանություններ» և նրանց նման «ռարձր» անձնավորությունների «ոգոստափառ» հովանավորության ներքո: Այդ «բարեգործներ» զանազան որեր եյին կազմակերպում, ինչպես՝ «սպիտակ յերեցուկի» կամ «կապույտ տերեփուկի» որը, վորոնց մասին խորհրդային յերիտասարդությունը չի ել իմանում: Սարքում եյին զանազան բանկետներ, բարեգործական յերեկությներ, վորքանոցների ու անկելանոցների հանդիսավոր բացում և այլն:

Այնպիսի հարկացողությունները, ինչպես՝ «սպիտակ յերեցուկի» կամ «կապույտ տերեփուկի» որը, «ծերունիների խնամատարության ընկերություն», «այրիների ու վորբերի խնամատարություն», վորքանոցներ, բարեգործական յերեկությներ, անկելանոցներ, —առաջներում տարածված այս տերմինները քաղաքացիություն չունեն խորհրդային յերկրում, և մեր յերիտասարդությունը վո՛չ մի գաղափար չունի դրանց մասին:

Իհարկե, յերեխաները, ծերունիներն ու այրիները շա՞տ քիչ բան եյին ստոհնում զանազան «ոգոստափառ» անձերից, և այդտեղ «պայծառափայլ» հոգաբարձուները կողոպտում եյին թե՛ այրիներին, թե՛ վորբերին, թե՛ աղքատներին, վորովհետեւ ցարական թուսատանում «բարեգործական գործունեյությունը» «պայծառափայլ» անձերի յեկամտի մի լրացուցիչ հոգվածն եր:

Այդպես եր կալվածատիրական-կապիտալիստական հանգստի իրավունքը:

Չնայած ծանր ձնումին, լավագույն առաջավոր բանվոր յերիտասարդությունը հրաժարվում եր կրօնական հաշիչից, անձնատուր չեր լինում արբեցուցիչ գայթակղություններին: Բոլշեվիկների կուսակցության ղեկավարությամբ նա սովորում եր ընդհատակում, պատրաստվելով մասնակցություն ցույց տալու հեղափոխությանը: Բանվոր յերիտասարդության շարքերից բանվոր դասակարգի գործի համար հիմարի մարտնչողներ եյին դուրս դաւիս:

Իրենց արյան գնով, իրենց կյանքի գնով նրանք նվաճեցին խորհուրդների իշխանությունը, վորը մարդկության պատմության

մեջ առաջին անգամ հռչակեց և փաստորեն իրագործեց աշխատավորների հանգստի իրավունքը:

Յեկ այսպես, ստալինյան Սահմանադրությունն աղահովում և յուրաքանչյուր քաղաքացու հանգստի իրավունքը, իսկ կապիտալիստները, գործարանատերերն ու կալվածատերերը զրկում են աշխատավորներին այդ իրավունքից:

Խորհրդային իշխանությունն աշխատավորների համար տարեցտարի ալելացնում և լրագրերի, գրքերի, ժուռանալների թիվը, գրադարաններ և ստեղծում, իսկ կապիտալիստները, գործարանատերերն ու կալվածատերերը յեկեղեցիներ, աղոթատներ, մասունքներ ու վանքեր են շինում:

Խորհրդային իշխանությունն աշխատավորների համար թատրոններ, կինոթատրոններ, ակումբներ, ստադիոններ և կառուցում, իսկ կապիտալիստները—պետական ողետներ, գինետներ, գարեջրի խանութներ:

Խորհրդային իշխանությունն աշխատավորներին ամեն հնարավորություն տալիս և թատրոններ, գրադարաններ, ակումբներ, զանազան սպորտային ակումբներ հաճախելու համար, իսկ կապիտալիստներն ու կալվածատերերն աշխատավորությանը զրկում են այդ բոլորից:

Աշխարհում վո՛չ մի տեղ յերիտասարդությունը չի վայելում և չի կարող վայելել հանգստի այնպիսի իրավունքներ և այլ իրավունքներն իրագործելու համար անհրաժեշտ այնպիսի հնարավորություններ, ինչպես իՍՀՄ-ի յերիտասարդությունն և վայելում:

IV. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԽՍՀ ՄԻՊՈՒԹՅԱՆ ԱԽԱԴԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 121-ՐԴ ՀԱՌՎԱՃՐ ԱՍՈւԸ
Ե.

«ԽՍՀՄ-ի քաղաքացիները ունեն կրթության իրավունք»:

Այդ իրավունքն ապահովվում է ընդհանուր-պարտադիր տարրական կրթությամբ, ձրի կրթությամբ՝ ներառյալ բարձրագույն կրթությունը, բարձրագույն դպրոցում սովորողների ճնշող մեծամասնությանը տրվող պետական թոշակների սիստեմով, դպրոցյաներում մայրենի լեզվով ուսուցանելով, գործարաններում, խորհրդական ստուգական կայաններում ու կոլտնտեսություններում, մեքենատրակտորային կայաններում ու գործարական տեխնիկական առաջարկանում և առաջարկանում աշխատավորների համար ձրի արտադրական, տեխնիկական ու ագրոնոմիական ուսուցում կազմակերպելով»:

Այդ նշանակում ե, վոր մեր յերկրի յուրաքանչյուր յերեսայի, յուրաքանչյուր յերիտասարդի համար պետությունն ապահովում ե կրթություն ստանալու հնարավորությունը:

Յարական Ռուսաստանում յերիտասարդությունը յերազել անգամ չեր կարող այդպիսի իրավունքների մասին։ Յարական Ռուսաստանը կլասիկ անդրագիտության յերկիր եր։ Կապիտալիստականներին ու կարգածատերերին ձեռնոտու չեր, վոր բանվորներն ու գյուղացիները գիտելիքներ ունենային, — զրագետին շահագործելն ավելի դժվար ե։

Վաղաժիմիր Իլյիչ Լենինը ցարական Ռուսաստանի մասին ասում եր, վոր նա մի յերկիր ե, վորտեղ ժողովրդի մասսան «կողպատված ե կրթության և գիտելիքների խմաստով»։ 1913 թվականին Վ. Ի. Լենինը գրել ե «Ռուսները և նեղրերը» հողվածք, վորի մեջ հետեւալ տվյալներն ե բերում։

«Ռուսաստանում անգրագետների թիվը կազմում ե 73 տոկոս, չհաշված մինչև 9 տարեկան յերեխաները։

Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների նեղրերի մեջ անդրագիտականների թիվը (1900 թ.) կազմում ե 44½ տոկոս։

Այս թվերը բերելով, լենինը գրում եր, վոր... «ռուսների

վրա ստրկության անհամեմատ ավելի շատ հետքեր են մնացել, քան նեղրերի վրա»* :

1913 թվին ցարական կառավարությունը, զեմստվոներն ու քաղաքային ինքնավարությունները ծախսել են ժողովրդական կրթության վրա 182 միլիոն ռուբլի, վորը կազմում է յուրաքանչյուր բնակչի համար 1 ռուբ. 36 կոս։

Ժողովրդական կրթության սիստեմը խիստ դասակարգային բնույթ եր կրում։ Մինչև անգամ միջնակարգ դպրոցի դռները փակ եյին բանվորների ու գյուղացի քաղաքության յերեխանների համար։ բնակչության այս խավերից այնտեղ միայն հասուլկենա յերեխանները կարող եյին ընկնել։ Բարձրաստիճան ավագանին իր յերեխանների համար ուներ լիցեյներ։ ազնվականությունը, բուրժուազիան, ինտելիգենցիան—գիմնազիաններ, ուսալական դըպրոցներ։ զինվորականների յերեխանների համար գոյություն ունեյին կաղետական կորպուսների հոգեորականների յերեխանների համար—հոգեոր դպրոցներ ու հոգեոր սեմինարիաններ, իսկ աղջիկների համար—թեմական դպրոցներ։ վաճառականներն ու գործարաններերն իրենց յերեխանների համար ստեղծում եյին առևտրական դպրոցներ։ Աղջիկների համար կային պետական, հարարակական, մասնավոր և այլ տիպի ինստիտուտներ ու գիմնազիաններ։

Աշխատավորների յերեխանների կրթությունը փաստորեն սահմանափակված եր ստորին դպրոցով։ Զքավոր գաստակարենի յերեխանների համար դպրոցների հիմնական տիպը յեռամյա տարրական և յեկեղեցական-ծխական դպրոցներն եյին։

1914—1915 թ. թ. դպրոցներում 7,8 միլիոն յերեխա յեր սովորում։ Այս թիվը գետ լրիվ չի արտացոլում Ռուսաստանի ժողովրդական կրթության իրական պատկերը, վորովհետեւ ըոլոր սովորողների 93,5 տոկոսն ընկնում եր ստորին գասարաններին, իսկ միջին դասարաններում (5-րդ, 6-րդ և 7-րդ) սովորում եր միայն 378 հազար հոգի, կամ 4,9 տոկոսը։

Բանվորների ու գյուղացիների յերեխանները հնարավորություն չունեյին ավարտելու թեկուղ քաղաքային և յեկեղեցական-ծխական դպրոցը։ Կարիքը նրանց կտրում եր դպրոցական սեղաննից։ Միջոցները չեյին բավականացնում կոչիկ, դպրոցական պիտույքներ գնելու։ միջոցներ չկային ուսման վարձը մուծելու։ տարրական գնելու։

* Կենիթ, Յերկ., հ. XVI, եջ 299. Բնդկծութերն ամենուրեք լենինին են։

կան դպրոցներից շատերում ուսումը վճարովի յեր։ Հենց այդ պատճառով ել 1910 թ. Պետերբուրգի տարրական դպրոցներից առանց ավարտելու դուրս յեկավ 7 հազար աշակերտ, վորոնցից 2500 հոգի հեռացավ 1-ին դասարանից։ Յեռամյա տարրական դըպրոցները մտած բոլոր աշակերտների միայն մի յերրորդն ավարտեց այդ դպրոցները, մի յերրորդը մաղվեց ուսման հենց առաջին տարում, իսկ մնացած մի յերրորդը—յերկրորդ և յերրորդ տարում։

Ցարական որենքները ժողովրդական դպրոցների բոլոր խնդիրները հանդեցրել եյին մի բանի, այն ե՝ «ժողովրդական տարրական դպրոցների նպատակն ե՝ հաստատել ժողովրդի մեջ կրօնական ու բարոյական հասկացողություններ և տարածել տարրական ոգտակար գիտելիքներ»։

Դորձնականում այդ իրադործվում եր՝ հետեւյալ կերպ։ տարրական դպրոցների աշակերտներին առավելապես դասականդում եյին։

«ա) կրոն (համառոտ քրիստոնեական վարդապետություն և սրբազն պատմություն)։

բ) քաղաքացիական ու հոգեոր մամուլի դրվածքների ընթերցում։

գ) վայելչաղբություն։

դ) թվաբանության առաջին չորս դործողությունները։

ե) յեկեղեցական յերգեցողություն։

Շաբաթական 24 դասից 6 դաս ընկնում եր կրոնին, յերեք դաս—յեկեղեցական—սրբավոնական դրադիտության։

Այս փաստերի հիման վրա դժվար չե դադարիար կազմել այն մասին, թե ինչ գիտելիքներ եր տալիս տարրական դպրոցն իր աշակերտներին—բանվորների ու դյուլացիների յերեխաններին։

Յեկեղեցական—ծխական դպրոցը յերեխաններին մինչև իսկ այդպիսի, ամոթ ե ասել, կրթություն ել չեր տալիս։ նա բացերաց ասում եր, վոր իր նպատակն ե. «աշակերտներին ներշնչել աստծու յերկյուղ, սեր դեպի սուրբ յեկեղեցին և հավատարկություն նրա ավանդներին, ինչպես նաև հավատարիմ հավատակություն ու սիրո զգացմուներ դեպի հայրենիքը։

Ավետարանի ուսուցման, առավոտյան, յերեկոյան և այլ տեսակի աղոթքների ուսուցման վրա ավելի մեծ ուշադրություն եր դպրձվում, քան թվաբանության վրա։ Զուր չեր, վոր գլխավոր

դեմքը թե՛ յեկեղեցական—ծխական, թե՛ տարրական դպրոցում տերտերն եր, վորը, իդեալ ե ասել, թե՛ սովորեցնում եր աղոթքով, թե ծեծում եր աղոթքով։

Քաղաքային և յեկեղեցական—ծխական դպրոցների աշակերտները պարտավոր եյին յեկեղեցի համախել, ուսուցիչների ու տերտերների վերահսկողության ներքո, առանց առարկության կատարել քրիստոնեական պարտավանությունը—խոստովանությունը և սուրբ հաղորդությունը։

Ուսւաց գեղարվետական դրականության մեջ լավ են տրտացոված հին դպրոցի այդ մռայլ, տիսուր պատկերները։

Աշակերտների տրամադրությունը խիստ ցայտում կերպով արտահայտել և Պոմյալովակին «Օպերկ երես» գրվածքի հետևալ տողերով։

«Վորքան յերանելի յեն այն ժողովուրդները,

Վորոնց ամբաղինդ նյարդերը

Զեն կրել մեր տառապանիները,

Զեն նաշակել գիտությունները»։

Իհարկե, ժողովրդական ուսուցիչների մեջ կային շատ մեծ թվով մարդեկ, վորոնք աղնվորեն եյին վերաբերվում իրենց դործին և իրենց ամբողջովին նվիրում եյին ժողովրդի լուսավորության ու կրթության դործին։ Բայց ցարական համարակակարգում հենց «ժողովրդական ուսուցիչ» անունը հեղնորեն եր հնչում, սուրբացման և աղքատության սիմբոլ եր հանդիսանում։ Ժողովրդական ուսուցիչներին վողորմելի գորշներ եյին վճարում, նրանք արդյունակ կրթություն ու ասունակ եյին չվառած, գրեթե անքնակելի խրճիթներում։ Ժողովրդական ուսուցիչն հաւածում եր առեն մի սեհարյուրյակային։

Ել՛ ալելի վատ եր բանվորների ու գյուղացիների յերեխանների կրթության գործն աղքային ծայրերկիրներում, վորոնք հեծում եյին ցարական Ծուսաստանի լծի տակ։ Այդ ծայրերկիրների և գաղութների, այսպես կոչված, աղզային փոքրամասնությունները վրկած եյին իրենց գրականությունից, զրկված եյին մայրենի լեզվով սովորելու հնարավորությունից։ Միայն կալվածառերերի, կուլակների, բեղերի, ինչպես և հոգեռական դասից յելածների ահմանափակ, աննշան քանակությամբ զավակների համար եր մատչելի ուսումը, իսկ բաղմաթիվ աղդային ծայրերկիրների բնակ-

չության մնացած մասսան անկուլոռուրականության և անդրագիւտության եր դատապարտված:

Ժողովրդական լուսավորության մինիստրությունը վարդիմիլի իւլիէ Լենինն անվանում եր «Ժողովրդական խալարեցման մինիստրություն»: Բնութագրելով Ռուսաստանի ժողովրդական կրթության աղքատիկ վիճակը, Լենինը միաժամանակ մատնանը՝ շում եր, վոր՝

«Անսահման ավելի տիսուր ե, ավելի ճիշտ, ավելի զգելի յե Ռուսաստանում աշակերտի և ուսուցի հոգեկան խեղճության, նվաստացման, ճգմվածության, իրավազրկության պատկերը: Ժողովրդական լուսավորության մինիստրության ամբողջ գործունեյությունն այս տեսակետից միմիայն մի անգերջ ծաղրանք եքաղաքացիների իրավունքների վերաբերմամբ, ժողովրդի հանդեպ: Վոստիկանական հետամտություն, վոստիկանական կամայականություն, վոստիկանական խոչընդոտներ ընդհանրապես ժողովրդի և առանձնապես բավորների լուսավորության նկատմամբ, վոստիկանական ավերալմ այն բանի, ինչ վոր ինքը ժողովուրդն անում ե իր լուսավորության համար—ահա թե ինչի յե հանգում մինիստրության ամբողջ դործունեյությունը*...»:

Ավելի լավ չեք ցարական Ռուսաստանում նաև բարձրագույն կրթության դործը: Բարձրագույն դպրոց ընդունվելիս յերիտասարդից փաստաթղթեր եյին պահանջում ծագման մասին, քաղաքական բարեհուսության մասին, պահանջում եյին վոստիկանությունից ստացած վկայական «անբասիր վարքի մասին»: Յեվ արդեն, իհարկե, հասարակ ժողովրդից շատ քչերն եյին անարդել անցնում այդ Փիլտրից և տեղ դրավում համալսարանական առողմությայում:

Պաշտօնական տվյալներով**, 1914—1915 տարում Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում եր 124 հազար ուսանող: Համալսարաններում ուսանողների 36 տոկոսը կազմում եյին աղնվականների ու աստիճանավորների զավակները. 10,3 տոկոսը—հոգեորականության զավակները. 11 տոկոսը—պատվավոր քաղաքացիների ու վաճառականների զավակները. 14,5 տոկոսը—ունեոր գյուղացիների և կազակների զա-

* Լենին, Յերկ., հ. XVI, հջ 413: Ընդգծությունը լենինինն են:

** Ժողովրդական լուսավորության մինիստրի 1915 թվի ամենահպատակ հաշվետությունը:

վակները. 24,3 տոկոսը—մեջանների և համբարականների դաշլակները. 2,8 տոկոսը—այլ դասերից յելած յերեխանները. մնացածները—ուսարահպատակներ եյին:

Մեկնաբանելով այդ առանց այն ել ցուցանշական թվերը, հարկավոր ե ամել, վոր դյուղացիական դասին եյին պատկանում, որինակ, առևտրականները, պանդոկապետները, կուլակները, իսկ մեջանական դասին՝ առևտրականները, գործարանատերերը, զանազան աստիճանավորները:

Ուսանողների ճշգող մեծամասնությունը պատկանում եր չաղործող դասերին—աղնվականությանը, հոգեորականությանը, կուլակությանը կամ՝ «պատվավոր քաղաքացիներին»:

Սակայն բանվորների ու դյուղացիների շարքից յելածների բարձրագույն դպրոց ընդունվելու դժվարությունները դաժան սոցիալական ընտրությամբ չեյին սպառվում: Բարձրագույն դպրոցի ուսման անչափ բարձր վարձը նույնական աշխատավորների համար խոչընդոտ եր հանդիսանում վրթություն ստանալուն: Ուսման համար պետք եր վճարել տարեկան առնվազն 100 ռուբլի: Իսկ հագուստը, զամանակը ըստ, զամանակը ըստ, ուսումնական պիտույքները, բնակարանը, սնումները: Զե՞ վոր դրա համար ել փող եր պահանջվում, իսկ փող բանվորն ու դյուղացին, ինչպես հայտնի յե, չունեյին:

Բարձրագույն դպրոցների ուսանողների մեջ շատ կային, այսպես կոչված, «համբարենական ուսանողներ», վորոնք սովորում եյին սահմանված ուսման ժամկետից 2—3 տարի ավելի: Այդ, այսպես կոչված, «համբարենական ուսանողներն» ել հենց բնակչության գլխավորապես ամենաքիչ աղամայության պատկանող մարդեկ եյին:

1908—1910 թ.թ. Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտն ավարտեցին 409 մարդ: Դրանցից՝ սահմանված ժամկետում սովորել եյին միայն 57 մարդ. մի ավելորդ տարի սովորել եր 40 մարդ. ավելորդ յերկու տարի սովորել եր 118 մարդ. ավելորդ 3 տարի—63 մարդ, ավելորդ 4 տարի—51 մարդ և այլն*:

Ինչպես տեսնում ենք, «կրթության իրավունքը» մինչհեղափոխական Ռուսաստանում պատկանում եր միայն բուժութեազիայի տղաներին և աղջիկներին: Յեվ միմիայն, վորակես վողորմություն, այդ իրավունքից ոգտվում եյին բանվորների ու դյուղացիների շարքերից յելած համուկենաց յերջանիկները:

* «Կ характеристике современного студенчества». СПБ 1910 г.

Գրությունն ավելի լավ չե բուրժուական յերկրներում նաև այժմ:

Ֆաշիզմը Գերմանիայում շատ բաներում մինչև իսկ գերազանցել է ցարական Ռուսաստանից: Տարեցտարի ընկնում և Գերմանիայի բարձրագույն ռւսումնական հաստատություններում սովորողների թիվը: Յեթե 1930—1931 թ. այստեղ սովորում եր 137 հազար մարդ, ապա 1934—1935 թ. նրանց թիվն իջակ 89 հազարի, իսկ 1936 թվին՝ 76 հազարի:

Գերմանիայի լուսավորության մինիստրության 1936 թ. փետրվարի 26-ի գեկրետով բարձրագույն ռւսումնական հաստատությունների ռւսանողների ընդունելությունը կրծատվել է 1935 թվականի համեմատությամբ մոտավորապես 35—40 տոկոսով: Այդ գեկրետի համաձայն, բարձրագույն ռւսումնական հաստատություններն ընդունվել կարող են միայն՝

ա) նացիոնալ-սոցիալիստական կուսակցության այն հին «մարտիկները», վորոնց տոմսի համարը մեկ միլիոնից չի անցնում.

բ) աշակերտների նացիոնալ-սոցիալիստական նախկին միության և գերմանական ռւսանողների նացիոնալ-սոցիալիստական միության այն անդամները, վորոնք միության մեջ են մտել 1931 թվականից վոչ ուշ:

դ) այն ռւսանողները, վորոնք մտնում են նացիոնալ-սոցիալիստական հետեւյալ միությունների մեջ, դրույյինների, պահուրդական ջոկատների, մոտորացված մարտական միջոցների նացիոնալ-սոցիալիստական դեկավարների կորպուսների մեջ:

Արժե՞ արդյոք այստեղ հիշել այն մասին, վոր, այսպես կոչված, «վոչ-լիարժեք ռասաներին» պատկանող յերեխաներին բացարձակապես արգելված ե բարձրագույն դպրոցում ռւսանել:

Լեհական լուսավորության մինիստրությունը չի թագցնում այն խայտառակ փաստը, վոր լեհաստանում դպրոցական տարիքի պատկանող մինչև մեկ միլիոն յերեխաներ զրկված են ռւսումից: Ազգային փոքրամասնությունները լեհաստանում բոլորովին զրկված են մայրենի լեզվով սովորելու հնարավորությունից: Ուկրաինական դպրոցների թիվը լեհաստանում 3000-ից իջեցված է 148-ի:

Անդլիայում հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը 7.800 հազարից (1913/14 թ.), իջել է 7.240 հազարի

(1933/1934 թ.): Նույնպիսի պատկեր ենք տեսնում մենք ֆրանսի-այում և ուրիշ շատ յերկրներում:

Յեկմիմիայն ԽՍՀՄ-ում ենք մենք տեսնում իսկական կուլտուրայի բարդավաճում, գիտության բարդավաճում, գիտելիքների ծաղկում: Միայն մեր յերկրում ամեն մեկի առջև, ով ուզում է սովորել, լայն բացված են դպրոցների և ռւսումնական հաստատությունների դռները:

Առաջին և յերկրորդ հնդամյակների տարիներում ԽՍՀՄ-ում ստեղծվել են մոտ 50.000 նոր դպրոցներ ինչպես ի հաշիվ նոր շնարարության, այնպես և գլխավորապես գյուղի լավագույն տները—կուլտակների ու կալվածատերերի տները—դպրոցների համար հարմարեցնելու միջոցով: 1936 թվականին մեր քաղաքներում ու բանվորական ավաններում ըստ պլանի պետք է շինվեր 1.507 նոր բազմահարկ դպրոց և կոլտնտեսային գյուղերում պետք է կառուցվեր 2.802 նոր դպրոց: Այս պլանը հիմնականում կատարված է: Մեր յերկրում վոչ մի խոչընդոտ գոյություն չունի բնակչության պմենաբազմազան խավերի յերեխաների կրթության համար: Վոչնչացված են վորեւե դպրոց ընդունվելիս հնում յեղածագդային սահմանափակումների շրջանակները: Ուսումը բոլորի համար ձրի յի: Դեռ ավելին, սոցիալիստական պետությունն ու բներով ծնողներին պարտավորեցնում է իրենց յերեխաներին ռւսան տալ խորհրդային դպրոցները:

Ցարական Ռուսաստանում բնակչության 3/4-ը անդրագետ եր: Մեր յերկրում, ժողովրդական տնտեսության հաշվառման կենտրոնական Վարչության 1933 թ. տվյալներով, գրագետների թիվն արդեն կազմում է 90 տոկոս:

Դասավանդումը խորհրդային դպրոցում յուրաքանչյուր աղ-գության համար իր մայրենի լեզվով է կատարվում:

1935/36 ռասումնական տարում ԽՍՀՄ-ի բարձրագույն ռւսումնական հաստատություններում սովորում եր 525 հազար հոգի: Միայն վերջին 6 տարում—1930-ից մինչև 1935 թ.—մեր բարձրագույն ռւսումնական հաստատություններում ավելի քան 280 հազար յերեխասարդ մասնագետներ են պատրաստվել: Տեսնիկումներում 1935/36 ռւսումնական տարում սովորում եյին 711 հազար հոգի: Վերջին 5 տարվա ընթացքում տեխնիկումները 520 հազարից ավելի յերեխասարդ մասնագետներ են տվել:

Այս թվերը մեկնաբանությունների կարիք չեն զգում: Խոր-

Հըրդային կինը տղամարդու հետ հավասարապես սովորում է : Բավական ե ասել, վոր 1935 թվականին կանանց թիվը բուհերում կազմում եր 38 տոկոս, իսկ տեխնիկումներում՝ 44 տոկոս :

Խորհրդային պետությունն իր վրա յե վերցնում ուսանողության նյութական ապահովության հոգությունը : Խորհրդային ուսանողության ճնշող մեծամասնությունը պետական թոշակ է սուանում : Բուհերի, տեխնիկումների և բանֆակների ուսանողների թոշակի համար 1935 թվականին պետությունը 1.778 միլիոն սուրբի հատկացրեց : Բարձրագույն ուսումնական հաստատություններում թոշակ սուանում են 400 հազար ուսանող, տեխնիկումներում՝ 503 հազար ուսանող :

Գործարանային աշակերտության դպրոցներն իրենց գոյության ընթացքում տվել են մեկ ու կես միլիոն վորակավորված բանվոր :

Սոցիալիստական կառավարության այս բոլոր միջոցառումներն անսահման բարձրացրին բանվոր յերիտասարդության կուլտուրական ու կրթական մակարդակը : Պատահական չե, վոր Լենինդրադի, Մոսկվայի, Խարկովի, Գորկու, Սվերդլովսկի մեքենաշինական արդյունաբերության յերիտասարդ բանվորների 50 տոկոսն առնվազն յոթնամյա կրթություն ունի :

Մեր յերկրը, նրա քաղաքացիները և, առաջին հերթին, յերիտասարդությունը, համառորեն սովորում են : Վերցրեք, որինակի համար, Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանը : Այստեղ, առանց արտադրությունից կարգելու, սովորում է 18 հազար բանվոր, այսինքն՝ այդ հսկա գործարանում աշխատող մարդկանց ամբողջ կազմի 49 տոկոսը : Այստեղ, միայն ոտար լեզուների ինստիտուտում, 600 մարդ է սովորում : Այդպիսի որինակներ մենք ենք հազարներով բերել :

Կուսակցությունը և կառավարությունը միջոցները չեն խնայում խորհրդային քաղաքացիների ուսման համար : Միմիայն 1936 թվականին պրոլետարական պետությունը կրթության համար մոտ 13 միլիորդ ոուբլի յեր հատկացրել, իսկ առաջին և յերկրորդ հնդամյակի տարիներում ժողովրդական լուսավորության վրա յերկրը մոտ 49 միլիարդ ոուբլի յե ծախսել :

Այդպես և սոցիալիզմի հայրենիքն ապահովում իր ստալինյան Սահմանադրության 121-րդ հոգվածի կիրառումը կյանքում :

V. ԽՍՀՄ-ի ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստալինյան Սահմանադրությամբ ԽՍՀՄ-ի քաղաքացիներին վերապահվող բոլոր իրավունքներն անփոփոքեն կապված են նրանց պարտականությունների հետ :

Կապիտալիստական հասարակության մեջ տարբերությունն գոյություն ունի իրավունքների ու պարտականությունների միջև : Իրավունքները վերապահված են միմիայն մի դասակարգի՝ բուրժուազիային : Պարտականությունների կատարումը դրված է միմիայն ճնշված, չահագործվող դասակարգերի վրա :

Բուրժուալիստական որենսդիրներն իրավունքներն ու պարտականությունները վորոշում են՝ հարմարվելով կապիտալիստի ճաշակին, հարմարվելով նրա կինսամակներին : Ականավոր հեղափոխական հրապարականուս, Մարքսի ու Ենդելսի ժամանակակից, Պոլ Լաֆարդը դրել է, վոր բուրժուան այսպես ե բնորոշում իր «պարտականությունները» «Հասարակությունը—այդ յես եմ, բարոյականությունը—այդ իմ նաշակն ու իմ կրթերն են, որենիքը—այդ իմ շահեն ե» :

Լաֆարդը դրել է. «Կապիտալիստն իրեն նվիրում է մարտողության աշխատանիքին . նա ուտաւմ և խմում է, վորպեսի աղքարտադրի*», իսկ աշխատավորների պարտականությունը բուրժուական հասարակության մեջ՝ «իրենց իրավունքներից հրաժարվելն ե» :

ԽՍՀՄ-ի աշխատավորները, պատմության մեջ չտեսնված իրավունքներ ունենալով, կրում են և մի շարք պարտականություններ : Այդ պարտականությունների թվարկումն իսկ վկայում է, թե յուրաքանչյուր խորհրդային քաղաքացի լինչպիսի բարձր տեղ է գրավում հասարակության մեջ :

Վորոնք են այդ պարտականությունները :

Յուրաքանչյուր յերիտասարդի և յուրաքանչյուր աղջկա, ինչ-

* Պոլ Լաֆարդ, Կապիտալի կրոնը: «Против бога и капитала» Ժողովածու, Մոսկվա, 1923 թ., եջ 93:

պես և մեր յերկրի բոլոր քաղաքացիների ամենակարևոր պարտականությունը, նախ և առաջ, այն է, վոր նրանք անշեղորեն պահպանեն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Մունիշյան Սահմանադրությունը, վորպես Խորհուրդների յերկրի հիմնական որենքը։ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Մունիշյան Սահմանադրությունը պահպանելու համար յերիտասարդ քաղաքացին պետք է ուսումնասիրի և իմանա այդ Սահմանադրությունը։ Ստալինյան Սահմանադրությունն իմանալ — այդ նույնը չե, ինչ վոր այն «անդիր» անելլ։ Ստալինյան Սահմանադրությունն իսկապես իմանալ նշանակում է գիտակցաբար յենթարկվել նրան՝ վորպես ԽՍՀՄ-ի քաղաքացիների կյանքի հիմնական որենքին։

Կոմյերիտականները պետք եւ վոչ միայն իրենք պահպանեն ԽՍՀՄ-ի Սահմանադրությունը, այլև պետք եւ յերիտասարդության մասսաներում հարգանք դաստիարակեն դեպի Սահմանադրությունը, դեպի խորհրդային իշխանության որդաններն ու նրա ներկայացուցիչները—դեպի ժողովրդի ընտրյալները։

Շահագործվող մասսաների շահերը հակասության մեջ են գտնվում կապիտալիստական աշխարհի որենքների հետ։

Խորհրդային որենքի հեղինակությունը հիմնված է աշխատավոր ժողովրդի խմական շահերի վրա։

Խորհրդային որենքը ժողովրդի ճիշտ հասկացված և ստույգ արտահայտված կամքն է։ Խորհրդային որենքների պահպանումն այդ կամքի կատարումն է։ Խորհրդային որենքների խախտումը ժողովրդի շահերի անտեսումն է։ Կապիտալիստական հասարակության մեջ յուրահատուկ քաջություն է համարվում «որենքը զանց առնելու» չնորհքը։ Խորհրդային քաղաքացու քաջությունն այն է, վոր նա թույլ չտա որենքը խախտել և սրբությամբ պահպանի հեղափոխական որինականությունը։

ԽՍՀՄ-ի քաղաքացու ամենաառաջին պարտականությունն է՝ ամենայն խստությամբ պահպանել աշխատանքի կարգապահությունը։ Ստալինյան Սահմանադրությունը հաղթանակած սոցիալիզմի Սահմանադրությունն է։ «...Սոցիալիզմը աշխատանքի վրա յե կառուցվում։ Սոցիալիզմն ու աշխատանքն ամբաժանելի յեն միմյանցից...»։

* Ստալին, Վօռօս Լենինիզմ, եջ 533, 10-րդ հրտա. (հայերեն՝ եջ 661)։

Վաղիմիր իլլիչ Լենինը 1918 թվականին գրում եր՝ «Ճշշառությամբ ու բարեխղճորեն պահպահությունի հաշիվը, տնտեսությունը վարիր խնայողությամբ, դատարկապորտություն մի՛ անի, մի՛ գողանա, պահպանի՛ր ամենասխատ կարգապահություն աշխատանքի մեջ—հատկապես այսպիսի լողունքները, վոր իրավացիկորեն ծաղրում ելին հեղափոխական պղողետարներն այն ժամանակ, յերբ բուրժուազիան նման ճառերով քողարկում եր իր՝ վորպես շահագործողների դասակարգի տիրապետությունը, այս լողունգուներն այժմ, բուրժուազիայի տապալումից հետո, դառնում են մոմենտի հերթական ու գլխավոր լողունգները»*։

Ի՞նչ է նշանակում աշխատանքի մեջ կարգապահություն պահպանել։

Այդ նշանակում ե՝ չխուսափել աշխատանքից և այն կատարել մասանց առարկության յենթարկվել խորհրդային աղմինիստիւտորի—միանձնյա պետի, աշխատանքի պրոցեսի ղեկավարի—կարգադրություններին։

Խորհրդային ձեռնարկություններում, կորանտեսություններում, զպրոցեսներում, աշխատանքի կարգապահությունը խորապես բարերվում է կապիտալիստական հասարակությանը ծանոթարբերվում է կապիտալիստական համարդիկ են աշխատում խորհրդապահությունից։ Միլիոնալոր մարդկի են աշխատում չըրգային ձեռնարկություններում, խորհանտեսություններում, չըրգային ձեռնարկություններում և հիմնարկներում։ Նրանք միմյանց դեմքունտեսություններում և հիմնարկներում։ Նրանց միմյանց դեմքնանազում, բայց կապված են մի ընդհանուր գործով ու քով չեն ճանաչում, աշխատանքի յուրաքանչյուրն աշխատանքի յե գնում աշխատանքով։ Նրանցից յուրաքանչյուրը կատարի։ Նրանցից յուրաքանչյուրը ծանր պարտականությունը կատարի։ Նաև ամեն մի աշխատալորի անձնական գործածության յերկրի համար, ամեն մի աշխատալորի արժեքները արտադրի։ Գործարահամար անհրաժեշտ նյութական արժեքները արտադրի։ Գործարահամար, հանքահորը, խորհանտեսությունը, կոլտնտեսությունը, հիմնը, հանքահորը—դրանք սոցիալիզմի համար մղած մեր պայքարի նարկությունը—դրանք սոցիալիզմի համար մղած մեր պայքարի հեղինում դանաղան մեքնաների լծակները, վորպեսի ամբողջ վերջնում զանաղան աշխատանքի մեջ, և յեթե նա անփույթ բողջ յերկրի ընդհանուր աշխատանքի մեջ, և յեթե նա անփույթ աշխատանքի ժամանակ կարգապահության չի հետևում, նա չ, աշխատանքի ժամանակ կարգապահություն պարզունքի արդյունքները։

* Լենին, Խորհրդային իշխանության հերթական խնդիրները։

Յեթե կապիտալիստական ձեռնարկության մեջ աշխատանքի կարգապահությունը խախտող բանվորը տիրող փոքրամասնության շահերն ե խախտում, ապա սոցիալիստական ձեռնարկության մեջ ով աշխատանքի կարգապահությունը խախտում ե, նա սոցիալիստական պետության շահերն ե խախտում:

Հին աշխատանքային կարգապահությունը հիմնված եր մարդկային անձնավորությունը խեղդելու, ճնշելու վրա: Աշխատանքի նոր, սոցիալիստական կարգապահությունը՝ իր համար, աշխատավոր մարդու հարստացման և նրա ընդունակությունների ծաղկման համար կատարվող աշխատանքի կարգապահությունն է: Մեր յերկրի աշխատավորների ճնշող մասսան դդաց, դիտակցեց այն տարբերությունը, վոր գոյությունը ունի կապիտալիստական գործարանում կատարվող հարկադրական աշխատանքի ու մեր սոցիալիստական ձեռնարկության մեջ՝ իր համար կատարվող աշխատանքի մեջ: Ասկայն կան յերիտասարդության մեջ ել այնպիսի, թող թույլ տրվի ասել, «կտրիճներ», վորոնք կարծում են, թե քանի վոր ձեռնարկությունն իմն ե, կոլտնտեսությունն իմն ե, ապա ուրեմն կուզեմ՝ այսոր կաշխատեմ, չեմ ուզի՝ պարապ ման կդամ: Նրանց հետ, ովքեր ուղղելի յեն, մենք խոսում ենք համոզելու և դաստիարակելու լեզվով, իսկ նրանց հետ, ովքեր գիտակցաբար են կարգապահությունը խախտում, մենք պետք ե վարվենք հեղափոխական որենքների ամբողջ խտությամբ: ՀամլկօթեՄ-ի ծրագիրը պարտավորեցնում ե, վոր կոմյերիտականն ինքն որինակելի լինի աշխատանքի կարգապահությանը հետևելու դորձում և ողնի մեր արդյունաբերության ու տրանսպորտի ղեկավարներին, ողնի կորչտնտեսությունների վարչություններին, հիմնարկների ղեկավարներին, դպրոցների դիրեկտորներին, վորպեսզի նրանք ամրացնեն այդ կարգապահությունը:

Ստախանովականները—ահա նոր աշխատանքային կարգապահության, աշխատանքին ցույց տրվող նոր վերաբերմունքի մարդիկ, վորոնք վոչ միայն իրենք են կատարում պետության հանդեմ իրենց պարտականությունները, այլև ողնում են հետ մնացողներին, առաջավորների շարքերն են քաշում աշխատանքի իրենց ընկերներին:

Խորհրդային յերիտասարդության բախտը, նրա աճումը, զարգացումը, նրա ամբողջ կյանքն անխղելիորեն կապված են բանվորների ու գյուղացիների սոցիալիստական պետության հետ: Յեկ

ել ո՞ւմ աշխատանքը, յեթե վոչ յերիտասարդության աշխատանքը, ո՞ւմ կարգապահությունն աշխատանքի մեջ, յեթե վոչ յերիտասարդության կարգապահությունը, պետք ե որինակ հանդիսանալ լավագույն վերաբերմունքի դեպի այն մեծ գործը, վոր իր ստեղծագործ աշխատանքով կերտո՞ւմ ե մեր ժողովուրդը:

Վորքան ուժեղ ե աշխատանքի կարգապահությունը մեր ձեռնարկություններում, խորհանութեանություններում, կոլտնտեսություններում, դպրոցներում, այնքան ավելի ուժեղ, հարուստ և կուլտուրական ե մեր յերկիրը—մեր ժողովուրդը:

Աշխատանքի ժամանակ կարգապահություն պահպանելը, վորը բարձրացնում ե այդ աշխատանքի վրակն ու քանակը, դասակարգային պարտականություն ե սոցիալիստական պետության հանդեպ:

Նա, ով աշխատանքի կարգապահությանը չի յենթարկվում, նա չի կատարում իր պարտականությունները մեր պետության հանդեպ, ամբողջ աշխարհի աշխատավորության հանդեպ:

Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուրքացուրքացու պարտավորեցնում ե՝ «պահպանել ու ամրացնել հանրային, սոցիալիստական սեփականություննը, վորպես խորհրդային հասարակակարգի սրբազն ու անձեռնմխելի հիմք, վորպես հայրենիքի հարստության ու հզորության աղբյուր, վորպես բոլոր աշխատավորների ունեսը ու կուլտուրական կյանքի ազբյուր»:

Սոցիալիստական սեփականությունը սրբազործված ե աշխատավոր դասակարգերի տասնյակ և հարյուր հազարավոր լավագույն ներկայացուցիչների արյունով, վորոնք իրենց կյանքը տվին, նվաճելով իշխանությունը կապիտալիստներից ու կալվածատերերից, ժողովրդին վերաբերմնելով շահագործողների յուրացրած գործարանները, հողերը, անտառները, ընդերքի անհամար հարստությունները, արտադրության գործիքները:

Սոցիալիստական սեփականությունը սրբազործված ե միլիոնավոր բանվորների և կոլտնտեսականների արյունով, վորոնք աննկարգելի ջանքերի դնով, դասակարգային թշնամու դեմք դղված դաժան պայքարով, կոմունիստական կուսակցության դեկավորությամբ համախմբված, ամրակուռ կարգապահությամբ միաձուլված, հաղթահարեցին յերկրի տեխնիկական զարավոր հետամնացությունը և կառուցեցին սոցիալիստական հասարակություն:

ԽՍՀՄ-ի ամբողջ մեծ ժողովրդի հերոսական ջանքեր պահանջվեցին, վորապեսզի ամայի տափառուաններում աղմկել սկսեցին հարյուր հազարավոր տրակտորներ, վորապեսզի տայգան տեղի տար նոր գործարանների վիթխարի կորպուանների առաջ, վորապեսզի ամենուրեք-թե՛ Ասիայի ավագուաններում, թե՛ Ուրալի լուներում, թե՛ ուկրաինական ընդարձակ հարթավայրերում, թե՛ Արկտիկայի սառույցներում, թե՛ Հեռավոր Արևելքի կուսական անտառներում-շարժվել սկսեցին, աշխատել սկսեցին ժողովրդին պատկանող հաստոցները, մեքենաները, վորապեսզի աշխատել սկսեցին նոր գործարանները, վորապեսզի աճեցին ու ամրանային հարյուր հազարավոր կոլտնտեսություններ : Հանրային սեփականություններ ստեղծելու, աճեցնելու ու ամրապնդելու հիմքի վրա միայն հնարավոր դարձավ լայն մասսաների բարեկեցության ծաղկումը : Միայն այդ հիմքի վրա հնարավոր դարձավ ստալինյան Սահմանադրությունը : Ահա թե ինչու հանրային սեփականությունը պահպանելու պարտականությունը խորհրդային քաղաքացու համար վերևեց նախապես սահմանված մի ինչ-վոր պահանջ չե-այդ պարտականությունը բղիում է խորհրդային քաղաքացու կենսական շահերից :

Պահպանելով ու բազմապատկելով հանրային սեփականությունը, հանրային հարստությունը, մենք, ԽՍՀՄ-ի քաղաքացիներս, սպահովում ենք աշխատանքի մեր իրավունքը, կրթության և հանդստի իրավունքը, յերջանիկ յերիտասարդության և առաջովիկած ծերության իրավունքը : Պահպանելով հանրային գույքը, մենք սպահպանում ենք մեր պետությունը : Բազմապատկելով յերկրի հարստությունը, մենք ե՛լ ավելի յենք լավացնում մեր նյութական բարեկեցությունը, մեր կյանքն ե՛լ ավելի ունեոր ու կուլտուրական ենք դարձնում : Հաստոցը, տրակտորը, մանր մասերը, նյութերը—բոլորն, ինչ վոր վստահել են յերիտասարդին, հանրային սեփականությունն է : Այդ պատճառով յերիտասարդը պարտավոր ե խնամքով վերաբերվել դրանց, խնայողաբար գործածել նյութերը, վառելիքը, լույսը, պարտավոր ե յուրաքանչյուր բուռ հացահատիկը ամառնել հափշտակումից ու կորուստներից :

Իրերին խնամքով վերաբերմունք պետք է ցույց տալ վոչ ի սեր իրերի : Ոչ անփույթ և վերաբերվում պետության կողմից իրեն վստահած գույքին, հաստոցին, նա, նախ և առաջ, չի հարդում, հանցավոր արհամարհանք ե ցույց տալիս աշխատանքի, պայքարի,

դասակարգի իր ընկերներին և հենց իրեն : Այն, ինչ վոր մեղնում պատկանում է պետությանը,—այդ բոլորն ամբողջ ժողովրդի սեփականությունն է : Որինակի համար, մեր դաշտերում հարյուր հազարավոր տրակտորներ են աշխատավամ, նրանք ոլատկանում են պետությանը, այսինքն՝ ամբողջ ժողովրդին : Ամեն մի տրակտոր ստեղծելու համար հազարավոր մարդիկ են աշխատել : Այն մետաղն ստանալու համար, վորից տրակտորն ե պատրաստված, հանքագործները հանքաբար են դուրս բերել, հալոցավորներն այդ հանքաբարը հալել-դարձրել են չուդուն, իսկ պողպատ ձուլողները չուդունից պողպատ են ձուլել, տրակտորային գործարանների ինժեներներն ու բանվորներն այդ տրակտորների մեջ են դրել իրենց յեռանդը, իրենց խելքը, իրենց ուժերը : Նրանք հսկայական աշխատանք են կատարել, սկսած յուրաքանչյուր առանձին մասն արտադրելուց և վերջացրած կոնվեյերի վրա այդ մասերը հավաքելով : Տրակտորների արտադրությունը կատարվել է մաթեմատիկայի, Փիզիկայի, քիմիայի որենքներն իմանալու վրա հիմնված ճշգրիտ ֆորմուլաներով : Այս բոլորը կատարվել ե մարդկանց աշխատանքը դյուրացնելու համար, վորովհետև յուրաքանչյուր տրակտոր հսկայական քանակությամբ մարդկային եներգիա : Անվտայթ վերաբերմունքը դեպի տրակտորները հանրային գույքը պահպանությունը և կազմում, անվտայթ վերաբերմունք ցույց տալը վատնում և բազմաթիվ աշխատավորների աշխատանքը և խախտում և մեր պետության հղությունը : Յուրաքանչյուր հաստությունը ամսագործությունը մեքենա, թեկուղ ամենահամեստը, բայց, յեթե նրանք դրված են խորհրդային ձեռնարկության մեջ, նրանք մեր թշնամիների գեմ ուղղված գենք են, վորչափով նյութ խորհրդային պետությունը հարստացնող նյութական արժեքներ են արտադրում :

Հանրային բարիքը մեր հասարակության հիմքն ե կազմում : Ահա թե ինչու հանրային սեփականության դեմ վոտնագություն անողները ժողովրդի թշնամիներն են : Մեր յերկրի յերիտասարդներն ու աղջիկները պետք ե պահպանեն հանրային սեփականությունը, ինչպես իրենց կյանքը, պահպանեն հանրային բարիքն, ինչպես իրենց հզորության, իրենց յերջանելու կամք և անձնական իրմանք պահպանությունը :

Մեր խորհրդային հասարակությունն արդեն ստեղծել է՝ դրի առնված որենքների կողքին գործող, կապիտալիստական բարոյականությունից խորապես տարբերվող, մարդու վարքի վերաբերյալ իր չգրված որմնագիրքը, հասարակական սպարտականության և կոմունիստական բարոյականության որենսգիրքը։ Հասարակական պարտականության այդ կանոնները կոմունիզմի համար մղվող պայքարումն են մշակվում։

Մեծ սոցիալիստական հեղափոխությունը հեղափոխություն է վոչ միայն եկոնոմիկայի մեջ, այլև մարդկանց գիտակցության մեջ։ Նա ազատում է մարդուն ամբողջ կեղտից ու գարշանքից, այն ամենից, ինչ վոր Մարքսն անվանել է «մանր-սեփականատիւրական խողություն», այն ամենից, ինչ վոր մարդկանց գիտակցության մեջ և մտցրել կապիտալիստական հասարակությունը։ Նա դաստիարակում է այն նոր մարդու գծերը, վոր ազատ է հին հասարակությունից ժառանգած սովորություններից, ունակություններից, հայացքներից, հասարակություն, վորտեղ գոյություն ուներ դասակարգային անհավասարություն, դասայնություն, աղղային անհավասարություն և սեռերի անհավասարություն։

Վաղիմիր Իլյիչ Լենինը սովորեցնում էր, վոր սովորության ուժը ամենասոսկալի ուժն է։ Հին սովորությունների և հայացքների ուժի վերացումը, կապիտալիզմի մնացուկների վերացումը մարդկանց դիտակցության մեջ յերկարառե դործ է և ինքնահոսքի չի կատարվում։ ՀամլկիչեՄ-ը, վորի խնդիրն է ողնել բոլշևիկյան կուսակցությանը յերիտասարդության և յերեխաների կոմունիստական դաստիարակման գործում, իրեն նախառակ է գնում տարածել սոցիալիստական համակեցության կանոնները։

Ստալինյան Սահմանադրությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու պարտավորեցնում է «ազնվորեն վերաբերվել դեպի հասարական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները»։

Ի՞նչն է ԽՍՀՄ-ի քաղաքացու հասարակական պարտականությունը։ Վորոնին են սոցիալիստական համակեցության կանոնները։

Բուռա անմահ յերգիծաբան Սալտիկով-Շչեդրինն ունի «Կրցլայ գօճ» վերտառությամբ մի պատմվածք։ Այդ պատմվածքի հերոսը, աղնվական-կարլածատիրական Ռուսաստանի

մի յերիտասարդ՝ Ֆեդենկա Նեուզողովը «հայրենիքը» համարում է մի հակայական կարկանդակ, վորին ձարպիկ մարդիկ ամեն ժամանակ կարող են մտանալ, մի կտոր պոկել նրանից և ուտել։

Խորհրդային քաղաքացին իրեն չի հակադրում պետությանը, նրան չի համարում կարկանդակ, վորը կարելի յե ուտել, անուշ անել «պետության» հաշվին։ Հասարակության և առանձին անհատների, պետության և յուրաքանչյուր քաղաքացու շահերի միասնությունը սոցիալիստական համակեցության ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկն է կազմում։

Աղնիվ վերաբերմունքը գեղի հասարակական պարտքը նշանակում է, վոր մեր յերկրի քաղաքացին իր սոցիալիստական պետության շահերն ավելի բարձր է դասում առանձին անհատի մասնավոր շահերից։

Մեր յերկրի յերիտասարդներն իրենց զարդացման ամբողջ ազատությունը, իրենց դաստիարակությունը, յերջանկության, բերկրանքի՝ իրենց նվաճած իրավունքները պարտական են իրենց պետությանը, խորհրդային իշխանությանը, Համամիութենական կոմունիստական բոլշևիկների կուսակցությանը։ Ահա թե ինչու Խորհուրդների յերկրի բոլոր յերիտասարդ քաղաքացիները պետք է գիտակցաբար իրենց անձնական շահերը յենթարկեն կոլեկտիվի շահերին և պարտավոր են անելու այն ամենն, ինչ անհրաժեշտ է, ինչ նպաստում է իրենց հայրենիքի հզորության ամրացմանը, նրա բարդավաճմանը, յերջանկությանն ու բարությանը։

Խորհրդային իշխանությունը, ինչպես այդ դրված է նաև ՀամլկիչեՄ-ի ծրագրի մեջ, աշխատանքի ու կրթության բոլոր արմատական հարցերը լուծել ե յերիտասարդության ողտին։ Ստալինյան Սահմանադրությունը ապահովում է աշխատանքի մեր իրավունքը։ «Վո՛չ թե գույքային գրությունը, վո՛չ թե աղգային ծաղումը, վո՛չ թե սեռը, վո՛չ թե պաշտոնյական դրությունը, այլ յուրաքանչյուր քաղաքացու անձնական ընդունակություններն ու անձնական աշխատանքն են վորոշում նրա դրությունը հասարակության մեջ»*։

Ազնվորեն աշխատել, իր ուժերը, իր գիտելիքները, յեռանդը, ընդունակությունները տալ հայրենիքի բարորությունը, —ահա մեր

* Ստալին, ԽՍՀ Սիության Սահմանադրության նախագծի մասին։ Զեկուցում Խորհուրդների համամիութենական ՎIII Արտակարգ համագումարում։

Հասարակական պարտականությունը։ Յեթե դու ազնվորեն ես աշխատում, յեթե քո ընդունակությունները ուղղում ես ժողովրդի ոգտին, յերկիրը վարձատրում ե քեզ ընդհանուր հարգանքով, փառքով ու պատվով։ Իսկ խորհրդային ազնիվ աշխատավորի փառքի ու պատվի հանդեպ նսեմանում ե, խալարում կապիտալիստական հասարակության մարդկանց պատիվը, վորովհետև այնտեղ փառքն ու պատիվն ամենից հաճախ խարերայությամբ, կաշառքով են ձեռք բերվում։ Ազնվությունն ու ընդունակությունը կապիտալիստական հասարակության մեջ ընդունվում են միայն այնչափով, վորչափով դրանք այնտեղ արժեք ունեն վորակես վաճառքի առարկա։

Խորհրդային իշխանությունը մեզ վերապահել է կրթության յերաշխավորված իրավունք։ Խորհրդային իշխանությունը մեր առջև բաց ե արել բոլոր ուսումնական հաստատությունների գործը. գնա՛, սովորի՛ր, բայց սովորի՛ր համառ կերպով, քո ու սուցման յուրաքանչյուր քայլը կապելով կոմունիզմի համար մըղվող պայքարի հետ։

Այն յերկրում, վորտեղ բոլոր քաղաքացիներին վերապահված ե կրթության յերաշխավորված իրավունք, քաղաքացու և ամենից առաջ յերիտասարդի պարտականությունն ե գրադետ, կրթված և կուլտուրական լինել։

Մեր յերկրի քաղաքացու հասարակական պարտականություն համաշցողությունը իր իսկ՝ մարդու շահերից ե բղխում։ Մարդը, նրա շահերն ու արժանապատվությունը մեր պետության ուշադրության կենտրոնն են կազմում։ Նա, սոցիալիստական հասարակության այդ աշխատողը, մեր յերկրի ամենաարժեքավոր կապիտալը ե։

Կապիտալիստական հասարակության մեջ մարդու արժեքի չափանիշը նրա շահույթի չափերն են։ Այնտեղ իշխամ ե գայլի որենքը—«մարդը մարդու հանդեպ դայլ ե», «...վոմանց պարտությունն ու մահ՝ մյուսների հաղթությունն ու տիրապետությունը...զախցախլի՛ր հետ մնացողներին, վորպեսզի քո տիրապետությունը հաստատես»*։

Սոցիալիստական հասարակության մեջ ազնիվ աշխատողն ազնիվ աշխատողի բարեկամն ե։ Մեր համակեցության կանոններն

են—«Ընկերական ոգնություն հետ մնացողներին առաջավորների կողմից, ընդհանուր վերելիքի համեմու համար»*։

Սոցիալիստական համակեցության կանոնները պահանջում են, վորպեկովի մեկ քաղաքացին հարդի մյուսի իրավունքները, պահանջում են հարգանք դեպի կոլեկտիվը, ազնիվ ու արդարածիտ վերաբերմունք դեպի ինքը և դեպի ուրիշները։

Բութ եղողիմը, զգվելի յեսասիրությունը, սառը հաշիվը հակասում են մեր բարոյականության կանոններին։ Խորհուրդների յերկրի յերիտասարդը, վորը հարգում և սոցիալիստական համակեցության կանոնները, ովետք և համակված լինի իսկական հերոսությամբ, անվեհերությամբ և ազնվությամբ։ Նա ընկերությունը գրժախստության մեջ չի թողնի, անտարբեր չի վերաբերվի խուլեղանի արարքներին, թույլ չի տա՝ հանրային հարստությանը վնաս հասցնել և անտարբեր չի անցնի թշնամիների չարագործությունների կողքից, վորոնք ուղղված են ամբողջ հասարակության և յուրաքանչյուր քաղաքացու դեմ։

Խորհրդային Միությունը ժողովուրդների համերաշխ ընտանիք ե։ Մեր յերկրում չկա ու չի կարող տարբերություն լինել ուռւսի և ուկրաինացու, հայի և թուրքի, ղազախի ու կիրճիզի, «սևերի» ու «սպիտակների», նստակյացների ու վոչնստակյացների իրավունքների միջև։

Մարդկանց, այսպես կոչված, «ռասայական» հատկանիշներով տարբերող ժամանակակից մարդկեր-Փաշիստների բարբարոսական, արյունոտ, մարդասոյաց «բարոյականությանը» մենք հակադրում ենք սոցիալիստական համակեցության մեր կանոնները—իսկական մարդասիրության բարոյականությունը, վորը բարձրացնում ե մարդկանց արժանապատվությունը, անկախ նրանց ուսայական և աղջային տարբերությունից։

Ահա թե ինչու լինինյան կոմյերիտմիությունը, իր ծրագրից յելնելով, պայքարում ե ազգային անիրավահավասարության մնացուկների դեմ, չովինիզմի, նացիոնալիզմի ամեն տեսակ արտահայտությունների դեմ և ամբողջ յերիտասարդությանը դասուխակում ե պրոլետարական ինտերնացիոնալիզմի վոգով, ժողովուրդների միասնության և յեղբայրության վոգով։

Սոցիալիստական հեղափոխությունը վոչնչացրեց այն որենք

* Առաջին, «Соревнование масс» բրուգուրի առաջարկանից։

ները, վորոնք սահմանափակում եյին կնոջ իրավունքները և նրան դարձնում եյին անիրազավահալասար : Սոցիալիստական հեղափոխությունը, ինչպես այդ գրված է ստալինյան Սահմանադրության մեջ, իրականացրեց առամարդու և կնոջ փաստական իրավահավասարությունը : Խորհրդային յերիտասարդների ու աղջկների հարաբերությունները զուրկ են կախվածության զգացմունքից և լի յեն մարդկային արժանապատվությամբ : Խորհրդային ընտանիք—հավասարների, փոխարժարձարար միմյանց հարգող մարդկանց ընտանիք է :

Գուեհիկ, վոչ-ընկերական վերաբերմունքը դեմի կինը, ընկերուհին, դեմի ընտանիքը համառակ և սոցիալիստական համակեցության կանոններին :

Մեր կոմունիստական բարոյականության բաղկացուցիչ մասն է կազմում հարդանքը դեմի մեծերը և հոգաստարությունը ծնողների մասին : Այդ հարդանքը յերիտասարդության մեջ զատիւրակում են մեր բոլշևիկյան կուսակցությունն ու լենինյան կոմիերիստությունը :

Յեվ, վերջապես, ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սըրբազն պարտականությունը հայրենիքի պաշտպանությունն է :

Դրան մենք նվիրում ենք մեր զեկուցման մի հատուկ բաժինը :

VI. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՈԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-Ի
ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒՐ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄՐԲԱԶԱՆ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՅՈՒՆՆ Ե

Նոր Սահմանադրության մեջ դրված է .—«Բնուհանուր պին-ըլորական պարտականությունն որենք և հանդիսանում :

Զինվորական ծառայությունը Բանվորա-Դյուկացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ-ի քաղաքացիների պատվավոր պարտականությունն է» (Հոդ. 132) :

«Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սըրբազն պարտքն է : Հայրենիքին դավաճանելը, — յերգումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության սաղմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատըժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չափործություն» (Հոդ. 133) :

Մեր կարմիր Բանակն անբաժանելի յե ժողովրդից : Նրա մարտիկները, հրամանատարներն ու քաղաշիատողները աշխատավոր ժողովրդի դավակներն են :

Մեր յերիտասարդությունը սիրում է Կարմիր Բանակը, խորապես հարգում և նրա մարտիկներին, հրամանատարներին ու քաղաշիատողներին : Մեր յերիտասարդությունը պատրաստ է ամեն մի բողե լրացնելու կարմիր Բանակի կազմը և դուրս գալու՝ սահմանները պաշտպանելու թշնամու հարձակումից :

Բոլորովին այլ եր հին ցարական բանակը : Բոլորովին այլ նպատակների յեր նա ծառայում : Բոլորովին այլ կերպ եյին դասավորված ցարական բանակի ու ժողովրդի փոխհարաբերությունները : Կապիտալիստներն առեղծում են իրենց բանակները, վորպեսզի ճնշեն աշխատավորներին : Կապիտալիստական պետությունների բանակները զինվորներին դարձնում են իրենց սպաներին հզատակվող կույցը դործիք : Մրանք խստավարժում են (մշտրոյտ) իրենց զինվորներին, նրանց դարձնում են կամազուրկ դործիք հրամանատարության ձեռքին, վորպեսզի նրանց սոխակեն զենքը

ձեռքին ճնշել բանվորներին և կովել իրենց դասակարգային յեղ-
բայրների դեմ իմպերիալիստական պատերազմի ճակատներում
հանուն կազմությունների շահույթի : Կապիտալիստական բանակ-
ների ամբողջ պատմությունը արյան ու արցունքի պատմություն
է, այդ մարդու անձնավորության վերաբերմաք կատարվող անլուր
ծաղրանքների պատմությունն է : Կապիտալիստական բանակների
գինվորներն ատում են իրենց սպաներին, սովաներն ատում են
զինվորներին—իրենց դասակարգային հակառակորդներին : Սպա-
ների կազմերը համալրվում եյին բացառապես շահագործող դա-
սակարգերից : Յարական բանակի յուրաքանչյուր 100 սպայից *
52-ը աղնվականներ եյին, 44-ը՝ բուրժուազիայի և կուլակու-
թյան շարքերից յելածներ և 4-ը՝ տերտերների տղաներ : Ժողո-
վորդն ատում եր բանակին, նրան իրեն ճնշելու դործիք համա-
րելով :

Յարական բանակի զինվորների տառապանքների յերկար շրջ-
թան սկսվում եր զինվոր տանելուց, ինչպես ցարական բանակում
կոչվում եր զորակոչը : Յերիտասարդությունը պատրաստ եր ա-
մեն բանի, միայն թե աղատվեր ծառայությունից : Վոմանք կըտ-
րում եյին իրենց մատերը, հանում եյին իրենց ատամները, ար-
հեստականորեն պալար ու խոց եյին առաջ բերում իրենց մարմնի
վրա : Նորակոչիկի հարազատները յերկար ժամանակ վողրում
եյին նրան, կարծես անխուսափելի մահվան գիրկը դիմելիս լի-
ներ : Զինվորացուները յերգում եյին, գառն արցունքներ թափե-
լով .

Ни из чести, ни из платы
Не пойдет мужик в солдаты!
Пальцы рубят, зубы рвут,—
В службу царскую не идет!
Всей деревней заревут—
Ваньку в рекруты сдаают! **

Յարական բանակը յերիտասարդությանը սպառափի եր ներ-

* «Военно-статистический ежегодник Армии», 1912 г.

** «Վոլոչ պատվի համար, վոչ վարձով

Թեղջուկը չե գնա զինվոր,

Մատներն ե կարում, տատմերը հանում,—

Յարին ծառայության չի գնում!

Ամբողջ գյուղով կվողբան,—

Թե Վանյային զինվոր տարան ե :

շնչում . յերիտասարդությունը գիտեր իր հայրերից, զորանոցի
տաժանակությունից վերադարձած մարդկանցից, թե ինչպես
բանակը խեղում և մարդկանց :

«Մուսատանում զրանոցը,—դրել ե Վ.Ի. Լենինը «Յօնկո և
րեվոլուցիա» հոդվածում, —միշտ ու ամենուրեք բանտից ավելի
վատթար ե յեղել, վոչ մի տեղ այսպես չեյին ճնշում ու ճգմում
անձնավորությանը, ինչպես զրանոցում . վոչ մի տեղ այն աս-
տիճան ծաղկած չեն յեղել խոշտանգումները, ծեծը, ծաղրանքը
մարդու վերաբերմամբ* :

Ուստական զինվորը բոլորովին իրավագուրկ եր : Պետք-
բուրդ քաղաքի 50-րդ հետեւակ-ոժանդակ բրիգադի 1905 թ. նո-
յեմբերի 7-ի հրամանում այդպես ել հենց գրված ե .

«Հայտարարել, վոր իսկական ծառայության մեջ գտնվող
բոլոր զինվորականներին որենքով արգելվում են բոլոր ժողով-
ներն ու միությունները, կոլեկտիվ կերպով գանդատ տալը, վո-
րեւե քաղաքական կամ պաշտոնեյական հարցեր քննարկելը» ** :

Զինվորի իրավադրկությունն ընդգծելու համար ցարական
բանակի զինվորական հրամանատարությունը հրատարակում եր
այսպիսի վիրավորական հրամաններ :

«Նկատելով, վոր, ըստ յերեւութին, չեն կատարվում իմ նա-
խորդների այն հրամանները, վորով հասարակ զինվորներին ար-
գելվում ե վորոշ փողոցներում և այդիներում ման դալը, հրա-
մայում եմ կատարել հետեւալը .

Հասարակ զինվորներին արգելվում ե ման դալ նելսկի պո-
ղոտայում, Բոլշայա Մորսկայա փողոցում, Տավրիկյան, Ալեք-
սանդրյան և Ամառային այգիներում, Կոննո-գվարդիական բուլ-
վարում և Դվորցովայա, Ազմիրալտեյակայա ու Անդիյակայա ա-
ռափնյա փողոցներում, նաև այն, վոր մարդիկ փողոցներում ման
չդան միմյանց ձեռքերից բռնած» *** :

Զինվորների հետ սպաները չափազանց դաժան եյին վարդում :
Զինվորներին ծեծում եյին : Ահա թե ինչ եյին գրում զինվորնե-
րը «Солдатская мысль» լրագրում (№ 1, հունվար, 1906 թ.) .

«143-րդ Կառպյան գնդում կապիտան Տիմիրյաղեվը բանավոր
գասից անբավարար պատասխան տալու համար շարքայինին այն-

* Լենին, Յերկ., VIII հ., եջ 395:

** «Новая Жизнь» լրագրը, № 16, 1905 թ. նոյեմբեր:

*** Հրաման Գետերբուրդի միացյալ ջոկատին, «Новая Жизнь» լրագր,
№ 10, 1905 թ. նոյեմբեր:

պես խմեց, վոր նրա ականջից արյուն հոսեց: Դրանից հետո նա հրամայեց շարքայինին արտաքնոցում բանտարկել:

Սպաները հայտարարում եյին, վոր զինվորները «հայվանանասուններ» են և վոր նրանց բանի տեղ դնել պետք չէ: Յարական բանակի հրամանատարությունն իր պարտականությունը չեր համարում մինչև անդամ զինվորներին, ինչպես հարկն է, կերակրելը: Ընդհակառակը, ինտենդանտներն ամեն կերպ նրանց կողոպտում եյին, խելով նրանցից նույնիսկ այն խղճուկ որաբաժնը, վոր նրանց համառում եր որենքով: Ահա, որինակ, Պակով քաղաքում 1905 թ. մարտի 25-ին հրատարակված՝ 24-րդ հետեւվակ գիլիպիայի հրամանը.

«Նկատի ունենալով, վոր գիլիպիայի գնդերի հասարակ զինվորներին ընթրիքի համար տրվող ուտելիքի քանակը պակասել է, ի փոփոխումն իմ ո. թ. № 10 հրամանի առաջարկում եմ»:

1. Ուտիսվա սեաձավարի ու գարեձավարի՝ 100 մարդու համար յեփող շիլային, յերեք դույլ ջրի փոխարեն, 3,5 դույլ լցնել:

2. Պասուց սեաձավարի ու գարեձավարի շիլային, մինչև այժմ 100 մարդու համար լցող 3 դույլ ջրի փոխարեն, 3,5 դույլ լցնել:

3. Թե պասուց և թե ուտիսվա տրորած կարտոֆելի մեջ լցնել 4 դույլ ջուր և գցել 2-ական ֆունտ գարեձավար յուրաքանչյուր 100 մարդու համար:

4. Զինապուրի մեջ, յուրաքանչյուր 35 ֆունտ կաղամբն, 3,5 դույլ ջուր լցնել:

5. Վինեգրետի մեջ 100 մարդուն մի փութ կաղամբ գցել:

Դիմիպիայի պետ՝ գեներալ-լեյտենանտ
ՌՈՄԱՆԵՆԿՈ

Շտաբի պետ՝ գնդապետ
ԿՈԶԼՈՎ»:

Զինվորները գանդատվում եյին «Խօսա Հիզն» լրագրում (№ 24, 1905 թ. գեկտեմբեր)։ — «Առաջին գվարդիական հրետանային բրիգադում մել շատ վատ են կերակրում: Պաս որերը — չորեքարթի և ուրբաթ — չչի յեն յեփում: Կաթսայի մեջ 150

մարդուն պետք ե գցել 15 ֆունտ ձուկ, վորի կեսը դողանում են: իհարկե, այնպիսի չչի յե ստացվում, վոր անհնար և ուտել, թստիում ենք տաշտի մեջ և միայն ցամաք հաց ենք ուտում»:

Յերբեմն զինվորները չեյին դիմանում այդ կյանքին և խոռվություն եյին բարձրացնում, թեպետև յուրաքանչյուր խոռվություն դաժանութեն պատժվում եր հրամանատարության կողմից: Զինվորների այդ խոռվությունները կառավարությունը, իհարկե, խնամքով թաղցնում եր, բայց նրանց վերաբերյալ լուրերը այնուամենայնիվ թափանցում եյին անլեզալ բոլշևիկյան մամուլի մեջ: Ահա «Կազարմա» լրագրում նկարազրված փաստերից մեկը.

«Շարժվել սկսեց 112-րդ Ուրալյան գունդը: Նոյեմբերի 8-ին զինվորները պատրաստվեցին ճաշելու: Ըստ սովորության նրանց տվին չչի՝ անցյալ տարվա կաղամբից, վորի մեջ վորդերն ազատվասում են: Այդ նկատելի յե նույնիսկ հասարակ աչքի համար: Կաթսայի գարշահոտությունը, վորի մեջ պատրաստվել եր չչին, զինվորներին դրդեց հրաժարվել ճաշից և աղմուկ ու բողոք բարձրացնել: Նրանք գիմեցին ֆելդֆելին՝ «Լավ կերակուր տուր»: Մի ակնթարթում իրար անցակ ամբողջ գունդը»:

Հրամանատարությունը դաժանորեն պատժում եր զինվորներին բողոքի ձայն բարձրացնելու ամեն մի փորձի համար: Ամենաշնչին հանցանքի համար զինվորներին ուղարկում եյին կարդապահական գումարակները, զինվորական բանտերը, կարցեր եյին նստեցնում: Ի՞նչ բան եր այդ կարցերը: Ահա նրանցից մեկը, վորը նկարագրված ե նույն «Կազարմա» լրագրում.

«Սովորական բարեխառնությունն այնտեղ մինուս 10⁰ և, իսկ ամառ ժամանակ ջերմության աստիճանը զրոյից չի բարձրանում: Կարցերում մեծ-մեծ մկներ են վազվում և քնել չեն թողնում կալանավորներին: Այնտեղ ընկնող մարդկի մի ամսից ալելի դիմանալ չեն կարող: Այնտեղ մեռավ նավաստի Սալամատովը՝ մի ամիս ել չնստած: Նրան այնտեղ նստեցրել եյին փողոցում ծխախոտ ծխելու համար: Նույնպես չդիմացավ կալանքին և մեռավ նավաստի Կոլյա Բակինը»*:

Մաղրուծանակի, խայտառակության և լկանքի այդ ամբողջ սիստեմի նպատակն եր զինվորին զարձնել բոլորովին կամացուրեկ գործիք հրամանատարության ձեռքին: Այդ «մշակումը» սկսվում եր նորակոչիկի առաջին իսկ քայլերից՝ զորանցում: Զինվորի մի-

* «Կազարմա» լրագիրը, № 4, 1906 թ. նոյեմբերի 8:

զից դուրս եյին հանում գիտակցության վերջին նշույլները։ Յերկար ժամերով նրան հարկադրում եյին սովորել թագավորող անձերի տիտղոսները և զանազան հրամանատարներին վողջունելը։ Ամեն ինչ անիմաստ սերտելիս զինվորները ծաղրուծանակի եյին յենթարկվում։

Ահա Մ. Գրումովի «Յա քրեստամ» դրքում ցայտուն կերպով նկարադրված զինվորի ուսուցման այդ պատկերը։ Բանավոր պարագմունքի դաս ե։ Զոկապեալ հարցում ե զինվորից։

«—Ապա, Արշինով, ի՞նչ խոսք ե «լեյբ»։ Մի քիչ ավելի բարձըր ասա մեզ։

— Լեյբ։ Լակապելով կրկնեց Արշինովը։

— Այո՛, «լեյբ»։ Այ, դու լեյբ-գվարդիական ես կոչվում, այդ ի՞նչ խոսք ե։

— Լեյբ այդ նշանակում ե առյօն, առողջ, խոշոր զինվոր, վորին գվարդիայի մեջ են ընդունում, պարոն ջոկապետ, վատահ պատասխանեց Արշինովը։

— Հիմա՞ր։ Անպոզ անասուն։ Դեռ չգիտես՝ ինչ բան ե «լեյբ»։ Մի՞թե յես ձեզ չեմ բացատրել այդ։

— Վո՛չ, պարոն ջոկապետ, — ասաց նստածներից մեկը։

— Հա՛, դե՛հ, լսեցե՛ք, բացատրեմ։ «Լեյբ»-ը թագավորկայսրի ամենամերձակոր պաշտպանն ե։ Հասկացա՞ք։ Մեր թագավորի ամենամերձակոր պաշտպանը . . . Ամա, նորից դու տօտ՛, Արշինով, շեֆն ո՞վ ե մեր գնդում։

Շարժվում են Արշինովի կարաններին կազցրած անհնարդանգձեռքերը։ Նրա ծանրաշարժ լեզուն չի կարողանում արտասանել այդ գժվար բառերը։ Ցավ են դարձել նրա կլիմին այդ «չեփերը» և մեկ ել զանազան «լեյբերը»։ Լացակումած ու քրտնելով մտածում ե Արշինովը, թե ինչ են նշանակում այդ բառերը, բայց թեկուզ սպանես ել, չի կարող նա արտասանել ինչպես հարկեն ե։ Իսկ պարոն ջոկապետը դարձյալ իրենն ե տուած տանում։

— Ի՞նչ ես յեղան նման մտիկ տալիս։ Պատառխանի՛ք, ո՞վ ե մեր չեփը։

— Դու մի ուրիշին հարցրո՛ւ, ելի։ Ի՞նչ ես շարունակ ինձ հարցնում։ Թո՛ղ մի մտածեմ՝ հետո տաեմ։

Նստածներից մեկը շշնջաց։

— Յա՛րը։

— Մեր յա՛րը, — ուրախ պատասխանեց Արշինովը։

— Ուրեմն ի՞նչ, նրան այդպես հենց միայն թաղավոր ել կոչում են, ել ուրիշ վոչ մի կերպ, և հենց ա՞յդ ե նրա ամբողջ տիտղոսը։

Չույելը վոտքի կանգնեց, աթոռը ավելի մոտեցրեց պատին և ժպտալով մոտեցավ քրտնած Արշինովին։

— Իսկ կնոջդ անունը հո չե՞ս մոռացել, ի՞ւ։ Մի ասա՛ մեղ, տեսնենք։

— Յես ամուսնացած չեմ, — հատակին նայելով պատասխանեց Արշինովը։

— Լավ, իսկ ո՞ւմ հետ եյիր սեր անում։ Զե՞ր գոր գյուղում գուրեե մի սիրած կունենայիր։ Դե՛հ, պատմի՛ր, չի՞նի՞ թե այդ ել չգիտես։ Զպատասխանես, ատամներդ արյունլվիկ կանեմ։

Ժպտում ե ջոկապետ Զույելը, ծիծաղում են դասի նստած պինվորները, Արշինովն ել ժպտաց, և նրա կարմիր այտերի վրա փոսիկներ գոյացան։

— Մարֆուտկա յե անունը, — ամոթիածությամբ առաց նա։

— Հա՛, Մարֆուշա։ Ապա մի մոտեցի՛ր այտեղ։

Արշինովը, փոսիկները դեռ թշերին, մոտեցավ կլոր, թիթեղալու բաց դոնով վառարանին։

— Վորովկետե դու բանակոր դասից վոչինչ չես հասկանում, ման արի ահա այսպես, — պայդած, — ցույց տվեց Զույելը։ — Այդ մեզնում զինվորները կոչում են «կուգեկուց»։ Քայլի՛ր ահա այս ձեռվ, վառարանից մինչեւ ահա այն պատը, իսկ յերբ վառարանին մոտենա։ Կդուսա այս գոնով խողովակի մեջ — Մարֆուշա, սիրելիս, ոգնի՛ր, մեռնում եմ։ Ծառայությունն ինձ չի հաջողում, բայց կարողանում թաղավորի տիտղոսն ասել։ Ահա այսպես քայլի՛ր և գոռա, մինչեւ վոր յես քեզ ասեմ բավական ե։ Յերկու անդամ բղամի՛ր։

Արշինովը ամբաջելով պազեց և գնաց վառարանից դեպի պատը, պառակ, ծանրացած սագի պես քամակն որորելով։ Հետ վետու, պատասխանալով վառարանի մոտ, նա բացված գոնով կամցառվ գոռաւմ ե.

— Մարֆուշա, սիրելիս, ոգնի՛ր, մեռնում եմ։ Ծառայությունն ինձ չի հաջողում, չեմ կարողանում թաղավորի տիտղոսն ասել։ Ահա այսպես ծառայությունն ասել . . .

Կրկնակի ճնշում եյին կրում վոչուած ծաղում ունեցող զին-

վորները, վորոնց արհամարհանքով «այլաղդիներ» եյխն անվանում: Կատաղած սպայության ողնության եյխն համուռմ յեկեղեցու սպասավորները, վորոնք իր հերթին յեռանդով մշակում եյխն զինվորին, ջանալով նրան ներշնչել բութ խոհեմություն, համբերություն, անառարկելի հնագանդություն պետքին: Նորակոչիկն ուղղված բարի յերթում, վորը տպագրված եր «ՀԱՅՈՎԵ ՍԼՈՎՈ» լրագրում 1915 թիին, ամված ե.

«Տեր աստվածը հաճախ մարդկանց ծանր փորձություններ ե ուղարկում: Դրանք մի՛ համարեք վորպես ճակատազրի կողմից անարդարություն ձեր նկատմամբ և մի՛ համարեք ձեզ ամենադժբախտն ու ամենաթշշկառը... Առանց առարկության կատարեցե՛ք հրամանատարության բոլոր հրամանները, հնագանդվեցե՛ք վո՞չ միայն քարի ու հեզ, այլև դաժան պետքի բոլոր հրամաններին: Հնագանդվեցե՛ք նրանց վո՞չ միայն պատժից վախճանալով, այլև խղճի թելադրանքով, ու բոլոր վիրավորանքները տարեք հեղությամբ ու խոնարհությամբ: Հիշեցե՛ք—աստծուն ա՛յն ե հաճելի, յերբ մարդ, աստծուն միտ բերելով, վիշտը կրում ե անարդար կերպով տուժելով»:

Յարական բանակ կոչվող ծանր տաժանակրությունը գերեզման ե իջեցրել բաղմաթիվ կյանքեր, զինվորների մահացությունն այնտեղ ալելի բարձր եր, քան բոլոր յելքովական բանակներում: Տարեկան 7 հարդար զինվոր հիվանդանում եր թոքախտով և 50 հազար զինվոր՝ վեներական հիվանդություններով: Հաճախ մարդկանց զինվոր եյխն դարձնում վորպես պատիժ: Այդպես զինվոր դարձրին հոչակավոր ուկրաինական բանաստեղծ Տարաս Շեվչենկոյին, վորին ցարական բանակը տառացիորեն խեղեց: Իր որտեսքում Շեվչենկոն գրել ե.

«Ցեմե յես մի հրեշ, մի արյունաբրու մարդ լինեյի, ապա այդ դեպքում ինձ համար չեր կարելի հարմար մահապատիժ հնարել, քան ինձ Որենքուրդյան առանձին կորպուսն ուղարկելը»:

Զինվորներին աշխատում եյխն մեկուսացնել, անջատել արտաքին աշխարհից: Նրանց ամեն կերպ զրայում եյխն հեղափոխականների գեմ, և սպայության ու տերտերների կողմից խարված, ինդ ու կրակ զինվորները չառ անդամ են գուրս յեկել հեղափոխական մասսաների գեմ: Այդպես, զնդակոծվեց 1905 թ. հունվարի 9-ի խաղաղ ցույցը Պետերբուրգում, ձնշվեց 1905 թ.

դեկտեմբերյան ապստամբությունը Մոսկվայում: Զինվորները 1912 թիին Լենայի հանքերում կրակեցին բանվորների վրա: Բնդհատակյա «Կազարմա» լրագիրը հաղորդեց, վոր միմիայն յերկու շաբաթվա ընթացքում, 1905 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 24-ը, ապստամբությունը ձնշելիս զորքերը քաղաքներում և դյուղերում ավելի քան 5 հազար մարդ սպանեցին:

Բնական ե, վոր ժողովրդի համար հենց «զինվոր» բառը ձնշման սիմբոլ եր: Զուր չեր, վոր ժողովրդական հին առածները դինվորի մասին այսպես եյխն ասում: «Զինվորը մոտ ե՝ խոնարհ վողջունի՞ր»: «Հո զինվորը, հո գայլը՝ վորտեղ ինչ պատահի, այնտեղ ել կապտառոտի»: Բայց միաժամանակ ժողովրդական առածները կարելցություն են արտահայտում դեպի զինվորի գառը վիճակը: «Զինվորը բզով ե սակրվում, ծխով տաքանում»: «Զինվորը ձանձի պես մի բան ե, վորտեղ ձեղք, այնտեղ ել անկողին, վորտեղ ցանկապատ, այնտեղ ել բակ»: «Մի փշուր բանով կուշտ ե, մի քիչ ջրով հարբած ե»:

Ցել ի՞նչպես կարող եր ժողովուրդը սիրել և հարդել ցարական բանակը, քանի վոր վերջինս ցարիկմի ձեռքին մի մեծ ուժ եր աշխատավոր մասսաներին ձնշելու և խեղդելու համար: Բանակի վրա հենքած, ցարական կառավարությունը պաշտպանում եր կալվածատերների՝ հողի մասնավոր սեփականությունը և կապիտալիստների՝ արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը: Բանակը նա ողտագործում եր, վորպեսդի արյան ծովի մեջ խեղդի բանվորների ու գյուղացիների բողոքի ամեն մի փորձ կամայականության դեմ: Չե՞ վոր հենց գործարանում գործադրու եր սկսվում կամ գյուղում խորվություն եր ծագում, գործարանատերը, կալվածատերն առաջին հերթին զին վորներին կամ կանչում:

Ցել ի՞նչ եյխն հարկադրված պաշտպանելու ցարական բանակի զինվորները: Նրանք հարկադրված եյխն պաշտպանելու կամայականության իրավունքը ցարական սպրիչնիկների համար, ժողովրդին շահագործելու իրավունքը կարմածատերների, կապիտալիստների, վաճառականների և կուրակների համար, աղքատությունը, խափարը, տգիտությունը ու տառապանքը աշխատավոր մասսաների համար: Նրանք հարկադրված եյխն շահագործողների համար նոր հողեր, ծովեր, նեղուցներ, նոր չուկաներ նվաճելու ի վառ ոռուսական իմպերիալիզմի: Ցել յուրաքանչյուր դիտա-

կից, առաջավոր մարդ կարող եր միայն մի բան ցանկանալ, — վորպեսզի ոռւսական ցարական բանակը կազմալուծվի, թուլանա՝ խաղաղ ժամանակ, պարտի՛ պատերազմի ժամանակ։ Այդպես եր բոլշևիկների կուսակցության քաղաքականությունը։

Յեղինչքան ել սպաները զինվորներին այնպես ելին պահում, վոր նրանք ժողովրդի հետ չչփվեն, ինչքան ել նրանք աշխատում ելին զինվորին կազմական պետության լուս ու մունջ, հլու դործիքը դարձնել, — բոլշևիկյան աշխատանքը բանակում առտիւճանաբար քայլքայում եր ցարական ինքնակալության այդ պատվարը։ Արդեն 1905 թվին տեղի ունեցան խոշորագույն դեպքեր, վորոնք ցույց տվին, վոր ցարական կառավարությունը չի կարող այլևս հույս դնել բանակի վրա։ Այդ՝ «Բնյազ Պոտեմկին-Տավրիացիան» զբահանավի ապատամբությունն եր, Կրոնչտաղտի ապրությունն եր։

Վ.Ի. Լենինը «Յօյսկո և քերուացիա» իր հոգվածում դրել է. «...Սեփաստովովի դեպքերը լիակատար փլուզումն են նշանակում զորքերի մեջ տիրող հին, սարկական կարգերի, կարգեր, վորոնք զինվորին դարձնում ելին զինված մեքենաներ, նրանց դարձնում ելին աղատության ամենափոքրիկ ձգտումները ճնշելու դործիք։ Անվերադարձ կերպով անցել են այն ժամանակները, յերբ ոռւսական բանակը, — ինչպես այդ յեղակ 1849 թվականին, — գնում եր հեղափոխությունը ճնշելու նուսաստանի սահմաններից դուրս։ Այժմ բանակն անդառնալիորեն հետ ե կանոնել ինքնակալությունից։ Նա դեռ ամբողջովին չի դարձել հեղափոխական։ Զինվորների ու նախաստիների քաղաքական դիտակցությունը դեռ շատ ցածր է։ Բայց կարեորն այն է, վոր դիտակցությունն արդեն արթնացել է, վոր զինվորների մեջ սկսվել է իրենց շարժումը, վոր աղատության վոգին թափանցել ե զորանոցներն՝ ամեն տեղ ու ամենուրեք»*։

Ճիշտ է, ցարական կառավարությունը դաժանորեն պատճեց «Պոտեմկին», «Պամյա Ազովա»-ի ապատամբությունները։ Սուկայն այդ պատիժը չեր կարող կասեցնել բանակի հեղափոխտկանցում։

Յերբ 1917 թվականի հեղափոխությունը ծագեց, զինվորները ժողովրդի կողմն անցան և հրաժարվում ելին պաշտպանել ցարա-

կան իրավակարգը։ Զինվորի չինել հաղած բանվորներն ու դյուցացիները ժողովրդի կողմը բոնեցին ընդգեմ ցարիզմի։ Փլուզումի ամենածանր տարիներում ստեղծվեց նոր բանակը, պրոլետարիատի բանակը, ժողովրդի բանակը, վորն առաջին անգամ պատմության մեջ գիտե, թե ինքն ում դեմ ե կուլում և ինչի համար ե կովում։

Վողերոված կոմունիզմի մեծ գաղափարներով, կարմիր Բանակի քաղցած ու սառած մարտիկները կուլում ելին սակմական փորձով ու սպառազինությամբ իրենց գերազանցող սպիտակ-պարզիականների ու ինտերվենտների զնդերի դեմ և դաժան, արյունահեղ գոտեմարտում հաղթում ելին նրանց։

Մեր կարմիր Բանակը, աղատասեր մեծ ժողովրդի բանակը, սոցիալիզմի յերկրի պաշտպանության գործին և ծառայում։ Նա պաշտպանում ե ԽՍՀՄ-ի բանվորների ու դյուցացիների խաղաղ աշխատանքը։ Մեր արդյունաբերությունը նրան ավել է առաջնակարգ, աշխարհում ամենալավ, սպառազինումն ու մատակարարումը։ Կարմիր Բանակի մարտիկներն ու հրամանատարները համառեն սովորում են սաղմական արվեստը, տիրապետում են սաղմական տեխնիկային։ Նրանք ամրում են նույն հետաքրքրական, ստեղծագործական աշխատանքով, ինչու ապրում են ԽՍՀՄ-ի բոլոր մյուս քաղաքացիները։ Կարմիր Բանակը կյանքի հիանալի դպրոց է։

Բոլորի աշքի առջև են այն ուշադրավ փոխակերպությունները, վոր կատարում է մեր կարմիր Բանակը։ Բաղմաթիվ յերիտասարդներ բանակ են գնում կիսազգագետ, հետամնաց վիճակում, իսկ այնուեղից վերադառնում են՝ գրադետ, առաջալոր, բանիմաց աշխատողներ գործած։ Թե ինչպես ե ընթանում կյանքըն ու ուսուցումը կարմիր Բանակում, այդ մասին հիանալի կերպով պատմում է յերիտասարդ մարտիկ Վասիլի Սմիրնովի որտեսում կատարված մի որվագրանցումը, վորը հրապարակված է «Կոմսոմոլյան Պարագաներ»-ում։

«ՄԱՐՏԻԿԻ ՈՐԸ

Կարմիր-բանակային վասիլի Սմիրնովի որատեսքից։
Զերմիշեվի զորանցներ։ Խեպսեմբերի 4

Ժամի 6

Դեռ քնի մեջ լսում եմ, թե ինչպես որապահը (անվանական) աղջանչան և տալիս։

* Լենին, Յերկ, հ. VIII, եջ 395, ռուս. հրատ.

— Վաշտ, վե՛ր կաց :

Յես վեր եմ ցատկում : Հինգ բոպեյից հետո մեր վաշտն արդեն շարլած է : Հակիրճ հրաման, և սկզբում և առավտովա ամենալավ բոպեն .—վաշտը լիցքի յե ուղեռվում :

Յես այն յենթարաժանաման մեջ եմ, վորի հրամանատարը ընկ . Միտովն է : Մեր յենթարաժանումն այժմ պատրաստվում է յերկրորդ աստիճանի «ՊԱԴ»-ի նշանի նորմաները տալու : Հետևազես, մենք նորից ենք կրկնում զանազան շարժումների, այսպես կոչված, «32 տակտերը» : Զափազանց հետաքրքրական յերեսութ . այդ կես ժամվա ընթացքում, յերբ տեղի յե ունենում լիցքը, մեր մկաններն այնպիսի ուժով են լցվում, մեր մարմնում յերեան և գալիս այնպիսի կայտառություն, վոր թվում ե, թե կարող ես հեշտությամբ և ազատ կերպով բարձրացնել ամեն մի ծանրություն : Վո՞րտեղից ե յերեսուն ըոպեյում առաջ գալիս այդ ուժը : Չեռքերո՞վդ ես, ինչ ե, շարժումների ժամանակ ողի միջից կորդում այդ ուժը :

Լիցքից հետո մենք «Հարձակում» ենք կատարում ջրի վրա : Աճառ, ատամի խողանակը, յերեսորիչը—այդ այն գործիքներն են, վորոնցով մենք գործում ենք «Հարձակման» ժամանակ :

— Նախաճաշ՝ չի, — լսվում է հրամանը : Ճաշարանում սեղանների վրա պատրաստ են մսով մակարոնը, թարմ հացը, հոտավետքել :

ԺԱՄԻ 8

Նախաճաշին հաջորդող հանդիսառը վերջացավ : Միելլունույնապես : Տեղի յե ունենում քաղուսուցումը : Մարտիկներն ակտիվութեն մասնակցում են հերթական թեմայի քննարկմանը :

Այսոր հիանալի յելույթ ունեցավ կարմիր-բանակային Պլեշակովը : Բայց նրանից ել լավ—իվկինը : Այս տղան պարզապես տաղանդ ունի : Նա խոսում է ինչպես խոկական հուետոր՝ կրակոտ, բացալառ : Կեցցե՞ս, իվկին : Մեր յենթարաժանաման բոլոր կոմյերիտականների մեջ, ասենք՝ անկուսակցական յերիտասարդության մեջ ել, իվկինն ու Պլեշակովը քաղուսուցումը, թերեւ, առաջինն են : Պետք ե մտածել, թե ինչպես կարելի յե մնացածներին ել առաջ շարժել : Պետք ե բոլորն իվկինի և Պլեշակովի պես լինելին :

ԺԱՄԻ 10

Ռազմական պարապմունքներ ըստ զասացուցակի : Որտեսքը մեջ չեմ դրանցում : Դրանց մասին հարկավոր եր առանձին դրել : Այսուեղ ամեն ինչ ինձ համար նորություն ե և բացառիկ կերպով հետաքրքրական :

ԺԱՄԻ 16

Ճաշից հետո մենք յրվում ենք զորանոցները : Մենք ունենք յերկու ժամվա հանդիսում : Վոմանք պառկում են ննջելու, վոմանք նստում են նամակ գրելու—պետք ե նամակ ել գրել տուն, չե՛ : Իսկ յես — յես նույնպես պառկում եմ, բայց քնել չեմ ուզում : Յես այժմ ամբողջովին կլանված եմ մի գրքով : Այդ մի պատմական վեպ ե, իղեպ, խիստ հին, 1863 թվի հրատարակություն,—մի վեպ այն մասին, թե ինչպես եր Անդրեան գաղութներ նվաճում : Վեպը կրում ե վոքր ինչ բարձրագործ անուն՝ «Զոն Դեմոն» : Վեպի հեղինակն ե՝ Ֆավալը : Դա, իհարկե, վոչ Շեքսպիր ե և վոչ Շիլլեր, վորոնցով, ի դեպ ե ասել, յես չափազանց հետաքրքրվում եմ, բայց այդ վեպն ես ունի իր արժանիքները . Նա հետաքրքրական ե և գրված ե առանց կեղծ բարեպաշտության : Սակայն նրա մեջ կան այնպիսի տողեր, վորոնք զայրույթ են առաջ բերում : Որինակ, նեգրերը համեմատվում են միայն չների հետ : Այդպես ել հենց ասված ե . . .

«Այդ սկ չները . . .»

Կամ՝

«Այդ անարգ չուն ավստրալիացիները . . .» :

Հեղինակը, իհարկե, նվաճողների կողմն ե, բայց նա չի իմացել, թե ինչ զգացմունքներ կհարուցի նրա գիրքը՝ 1935 թվին իմ ձեռքն ընկնելով :

Պարոն ֆալւլը հիացմունքով նկարագրում է նաև նեղերի հետ տեղի ունեցած գաժան զատաստանը, իսկ յես սրտիս խորքում այնպիսի խոսքեր եմ արտասանում, վորոնք վոչ մի առնչություն չունեն հիացմունքի հետ :

— Սրիկաներ, իմպերիալիստներ, — ասում եմ յես :

ԺԱՄԻ 17

Մասսայական աշխատանքի ժամանակն ե : Մենք լրագրեր ենք

կարգում: Մենք ծանոթանում ենք իտալո-հարեշական կոնֆլիկտին. վո՞ր ետապում և գոնվում այդ կոնֆլիկտն այսոր: Սկսվում է զրույցը: Իվլինը նորից իրեն ցույց է տալիս: Նա չուտ է ըմբռնում հիմնականը և ընդհանրացում է անում: Պլեշակովը հետ չի մնում: Պետք է մի անդամ ել ասել՝ իվլինն ու Պլեշակովը կորիճներ են:

ԺԱՄԻ 18

Շախմատիստները նստել են տախտակներն առաջներին: Վոլեյբոլիստները թրմփացնում են գնդակով: Հարմոնիստները ինչ- վոր բարդ մելոդիաներ են ածում: Իվլինը լենուկու հանդն և անում՝

Կуда, куда вы удалились!
Весны моей златые дни?.. *

ԺԱՄԻ 20

Յերեկոյան թեյ: Թեյի հետ համեղ զապեկանկա:

ԺԱՄԻ 22

Ավարտ:

Անկողնում պառկած յես մտածում եմ, վոր ահա յես չուտով կզորացրվեմ: Ախոս և բաժանվել բանակից, դորանոցից, տղեր- քից, վորոնց հետ ընտելացել, կարծես հարադար ես դարձել: Այս բույելին յես ամփոփումներ եմ կատարում: արդյոք յես այս մա՞րդն եմ, վոր եյի մինչեւ բանակ մտնելը, թե՞ ուզիւ եմ:

Ես ինձ այսպես եմ պատասխանում.—

— Այո՛, Վասիլի Անդրեյեվիչ, դուք նա յեք, բայց վո՞չ բու- լորովին նա: Հիշո՞ւմ եք, հարդեկ Վասիլի Անդրեյեվիչ, թե ինչ- քան թափթիվածն եյիք դուք առաջ: Հիշո՞ւմ եք՝ ինչպես դուք չգիտեյիք, թե ինչ բան ե կարդապահությունը: Կարմիր Բանակը ձեղ դարձրեց հավաքը ու ուշադիր, դո՞ւք, Վասիլի Անդրեյեվիչ, դարձել եք զուսպ, տակտ ունեցող, քաղաքավարի բացի դրանից՝ դուք շատ բան խմացաք: Որինակ, ի՞նչ բան ե կարմիր Բանակի մարտիկը և ի՞նչ բան ե թատրոնը: Ա՛լիր ճիշտն ասած՝ դուք լավ ծանոթացաք ժամանակակից ռազմական արվեստին, բայց համա- րյա վոչ մի խոչոր և հետաքրքրական ներկայացում ել Մոսկվայի թատրոններում բաց չեք թողել... Իսկ կինո՞ն: Այդ յե՞րբ ելիք

* Ուր, ուր դուք հեռացաք,
Քաղնան իմ վոսկի որեր...

դուք այնպես կանոնավոր, դրեթե ամեն հանդստի որ կինո հաճա- խում: Իսկ սիմֆոնիկ կոնցերտները: Այ, դուք ասում եք, թե սիրում եք Զայկովսկուն և Վագներին, իսկ առաջ դուք մինչեւ ան- գամ չգիտեյիք, թե ինչ են նշանակում այդ անունները: Այդպես, Վասիլի Անդրեյեվիչ... Բայց, կա մի «բայց»: Դուք, կարծես, վճռել եք բանակից հետո զնալ Մենդելեյևի ինստիտուտը սովո- րելու: Այդպես չե՞ արդյոք, թանդաղին: Իսկ ինչո՞ւ այսոր մի քիչ չպարապեցիք: Դե՛մ, ասենք ձեզ խանդարեց պարոն Ֆավա- լը... «Զո՞ն Դեմո՞ն»—ը գրավել է ձեզ: Ա՛լի, Վասյա, տես, վոր հետո անհարմար դրության մեջ չընկնես»:

Համեմատե՞ք այս մեջբերումը վերը հրապարակված «Յա- կрестами» գրքից բերված կտորի հետ: Կարմիր Բանակի մարտիկն ապրում է գիտակցական կյանքով, նրա ուսումը լրացրուն է, հե- տաքրքրական է, յուրաքանչյուր որը նրան նոր գիտելիքներ և տալիս: Վասիլի Սմիրնովի որատեսրում միանդամայն հայտնի պատճառներով վոչինչ չի ասված հատուկ ռազմական ուսման- մասին: Այդ ուսումը նույնպես բացառիկ կերպով հետաքրքրական ու բազմազան է: Յուրաքանչյուր կարմիր-բանակային հանրա- կըրթական և քաղաքական գիտելիքներ և ստանում, անցնում է հրաձգային գործը, տակտիկա, տեղագիտություն, ծանոթանում և ամենակատարելազործված մարտական տեխնիկային, տանկե- րին, ինքնաթիւններին, զրահաավտոմորիններին ու նրանց տակ- տիկական հատկություններին, հրետանուն, կամրջային ու գե- տանցի գործին, կապին: Մարտիկից պահանջվում է ծանոթ լինել գենքի բոլոր տեսակներին, վորոնց հետ միասին նա պետք է դոր- ծի: Նա կատարելապես պետք է կարողանա տիրապետել իր զեն- քին: Նախաձեռնության և գյուտարարության համար ինչպիսի՞ անսահման լայն ասպարեզ և բացվում յուրաքանչյուր կարմիր- բանակայինի ու հրամանատարի առջև: Յեվ պետք ե ասել, վոր ուցինալիքատորական-դյուտարարական շարժումը շատ ուժեղ և զարդացած բանակում, և հազարավոր կարմիր-բանակայիններ իրենց ռացիոնալիզատորական առաջարկներով ու դյուտերով անընդհատ կատարելազործում են մարտական տեխնիկան և ու- սուցման կազմակերպումը:

Յարական բանակի սպաներն ամեն կերպ հետամտում ելին դիրք ու լրացիր կարդացող զինվորին: Կարմիր Բանակը, ընդհա- կառակը, հարկադրում է կարմիր-բանակայինին՝ անդադրում աշ- խատել իր կուլտուրական մակարդակի բարձրացման համար:

Ահա մի փոքրիկ թվարկումն, թեպետե վոչ ամենեին լրիւ, այն դրբերի, վոր անպայման պետք ե կարգա յուրաքանչյուր կարմիր-բանակային .—

Ստալին.—«Вопросы ленинизма», История ВКП (б), Политучебник красноармейца, Писецкий.—«Борис Годунов», «Сказка о попе и работнике его Балде», Фофол.—«Ревизор», «Мертвые души», «Повесть о том, как поссорился Иван Иванович с Иваном Никифоровичем». І. Струнин.—«Казаки», «Хаджи-Мурат». Նեկրասով.—«Кому на Руси жить хорошо». Սալիկավ-Շչեդրին.—«Господа Головлевы», «Повесть о том, как мужик двух генералов прокормил». Մ. Фагիֆ.—«Песнь о Буревестнике», «Мать», «Мои университеты». Նովիկով-Փիփոյ.—«Цусима». Գելյան Բերբի.—«Обманутые братья», «Совет часового», «Честь красноармейца», «Проводы», «Два билета». Ֆուրմանով.—«Чапаев». Սերգիմովիչ.—«Железный поток». Ֆալեյեվ.—«Разгром». Շոլոխով.—«Тихий Дон», «Поднятая целина»:

ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների հետ համահավասար կարմիր-բանակայինները մասնակցում են ակտիվ հասարակական կյանքին: Դեռ ավելին, շատ կարմիր-բանակայիններ մասնակցում են նույն իսկ պետության կառավարմանը՝ վորպես ԽՍՀՄ-ի ԿԳԿ-ի և ՌՍՖՀ ԿԳԿ-ի անդամ: Ահավասիկ այդ մարդիկ —

ԱկիՄՈՎ Վ. Ս. տանկի ղեկավար,
ԲՈՒՐԳԱՆՈՎ, ՖՍԻԶ. ԱԿՐԱՄՈՎՎ. Կարմիր-բանակային,
ԳԱՅԳՈՒԿՈՎ Ն. Վ.—Ղարժական վաշտի կուրսանտ,
ԿՈՒՐՈՊՅԱՏՆԻԿ Գ. Պ.—«Парижская коммуна» մինկորի,

Կրտսեր հրամանատար,
ԼԵՎԱՇԵՎ Մ. ՅԵ.—կարմիր-նախավատորմային,
ՊԱՏԱՆԱ. Տ. Ա.—կարմիր-բանակային, մոտորիստ,
ՌՅԱԲԻՆԻՆ Ա. Պ.—Հեռավոր-Արեւելյան նախատորմի կարմիր-նախավատորմային,
ԶՈՒՄԱԿ Կ. Պ.—Բալթյան նախատորմի ելեկտրիկ,
ՇԶԵՐԲՈՎ Վ. ՅԱ.—ավագ մեխուեկավար,
ԱՆԴՐԵՅԵՎ Պ. Պ.—տանկիստ,
ԿՆՅԱԶԵՎ Թ. Մ.—Ն ավիոմասի մոտորիստ,
ՍԵՐԵԲՐՅԱԿՈՎ Դ. Ի.—կարմիր-բանակային,
ՏԻՄՈՇԵՆԿՈ Դ. Գ.—տանկի ղեկավար,

ՄԻԽԱՅԼՈՎ ՅԵ. Վ.—կրտսեր հրամանատար,
ՖՐՈԼՈՎ ՅԵ. Ա.—կրտսեր հրամանատար,
ՅԱՇԻՆ Կ. Ի.—կրտսեր հրամանատար:

Յեղ այս չե՞ վոր կառավարության անդամ՝ կարմիր-բանակայինների մի շատ փոքր մասն ե. ուկրաինական, բելոռուսական, ուղբեկական, թուրքմենական, տաջիկական, աղբյուջանյան, վրացական, հայկական կառավարությունների կազմում քիչ չե կարմիր-բանակայինների թիվը: Կարմիր-բանակայինները մասնակցում են քաղաքային խորհուրդների ընտրություններին, համագումարներին, նրանց ներկայացուցիչները մտնում են շրջանային և մարզային գործկոմների կազմի մեջ և այլն:

Վո՞րտեղ, աշխարհի վո՞ր յերկրում, վո՞րտեղ, վո՞ր բանակում, բացի մերից, հնարավոր ե այդպիսի իրավահավասարություն, յերկրի կառավարմանն ակտիվ մասնակցելու այդպիսի հնարավորություն «նախայի чин» կոչվող մարդու համար, «զինվորի» համար:

Ասենք մեզնում «զինվոր», « նախայի чин » բառերն ել են դուրս յեկել ԽՍՀՄ քաղաքացինների գործածությունից:

Հարյուրավոր շարքային կարմիր-բանակայիններ և կարմիր-նախատորմայիններ պարզեատրված են Խորհրդային Միության չքանչանով: Ընդսմին պարզե են ստացել վոչ միայն այն սահմանապահ-մարտիկները, վորոնք հերոսաբար հետ են մզել ճապոն-մանջուրական բանդաների հարձակումը, այլև նրանք, ովքեր համառ հերոսական աշխատանքով անթերի տիրապետել են իրենց հանձնված մարտական տեխնիկային:

Այդպես ե մեր կարմիր բանակը: Այդպես են մեր կարմիր բանակի—աշխարհի ամենաուժեղ բանակի—մարդիկ:

Մեր բանակի ուժը նրա մարտիկների և հրամանատարների բարձր գիտակցությունն ե: Յուրաքանչյուր մարտիկ գիտե, վորինքը պաշտպանում ե մեծ ժողովրդի յերջանկությունը, ամբողջ մարդկության յերջանկությունը: Մեր բանակի ուժն այն է, վոր նա կոչված ե պաշտպանելու իր քաղաքացինների խաղաղ աշխատանքը: Մեր բանակի ուժն այն է, վոր նրան ղլխավորում ե մեծ Ստալինի մարտական զինակից, ուսւ ժողովրդի հերոս զավակ, պանծալի զորավար, Խորհրդային Միության առաջին մարշալ Կլիմենտ Յեֆերմովիչ Վորոշիլովը, վորի կյանքի ուղին պատված ե բանվոր դասակարգի մեծ գործի համար մզված առաջնաւական ու հաղթական մարտերի վառողի ծխով:

Մեր բանակը պատրաստ է կրծքով պաշտպանելու իր հայրենիքը: Բուրժուական հասարակության մեջ չի յեղել և չկա այն աստիճան կեղծ և դատարկ մի բառ, ինչպես «Հայրենիք» բառը: Յեվ միայն Մեծ սոցիալիստական հեղափոխության հետեւանքով այդ բառը մեր յերկրում ստացավ իր իսկական իմաստը:

Աշխատավորն ի՞նչ հայրենիք կարող էր ունենալ, յեթե նրանից խլում եյին ամեն ինչ. վորքը հասակից՝ կաղիտալիստը չնչին գնով գնում եր նրա աշխատանքը, կողովոտում, յուրացնում. եր նրա ստեղծած արժեքները, այնուհետև նրա կյանքը շպրտում եր աղահ ու նողկալի «Հայրենիքի» համար մղվող պատերազմի դաշտերը, այն «Հայրենիքի», վորի տերն աշխատավորին ատելի կաղիտալիստն եր:

Պրոլետարը չուներ իր հայրենիքը: Զինված ազստամբության միջոցով իշխանությունն իր ձեռքը վերցնելով և իր յերկրի տերը դառնալով, նա հայրենիք ձեռք բերեց:

Խորհրդային յերկրի ամեն մի թիզ հողը հեղեղված է ավագ ռերնդի մարտիկների արյունով, վորոնք լովել են աշխատավորների՝ աշխարհում միակ հայրենիքի համար: Լուգանսկի ձորակները լինեն դրանք, վորտեղ վորոշիլովի կարմիր-դվարդիականները 1918 թվականին հետ եյին մղում գերմանական ոկուպանտների գրոհները, թե Կիեվի դաշտերը, վորտեղ 1920 թվականին բուղյոննու հեծելակները քառարով քչում եյին սպիտակ-լեռներին, կամ թե ծովամերձ բլուրները, վորտեղ Բլյուխերը 1922 թվականին ջախջախեց ճապոնական ինտերվենտներին, —ամենուրեք խորհրդային հողը մեղ համար թանգարին արյունով և նվաճված: Ահա թե ինչու հայրենիքի պաշտպանությունը, սահմանների անձեռնմխելիությունն աչքի լույսի պես ուսհաղանելը մեր սրբադան պարտականությունն ե:

Յեթե թշնամին համարձակվի հարձակվել, մենք կայծակի արագությամբ կհարկադրենք նրան իր սեկտական սերիստրիայում պաշտպանինելու:

Այս պայմաններում արիությունը պետք է հառուկ լինի մեր յերկրի յուրաքանչյուր յերիտասարդի, յուրաքանչյուր աղջկա: Արիությունը նույնպես ե դաստիարակլում, ինչպես բնավորության մյուս հատկությունները, և մենք նրանով անդադար պետք ե դինենք մեր յերիտասարդությանը:

Մեր յերիտասարդությունն իրեն դաստիարակում է անլեհե-

բության վոգով: Մեր յերիտասարդությունը կամքի յերևելի հատկություններ ե ձեւք բերում:

Մեր յերիտասարդությունը տենչում է բանակ գնալ և անկեղծորեն վշտանում և, յեթե այս կամ այն պատճառով չի կարողանում ընդունվել նրա շարքերը: Սակայն մինչև անդամ նրա շարքերից դուրս ել մեր յերիտասարդությունը պատրաստվում է կատարելու իր կարեռապույն այն պարտականությունը, վոր գրված և Սահմանադրության 132-րդ և 133-րդ հոդվածներում: Տասնյակ հազարավոր յերիտասարդ բանվորներ և կոլտնտեսականներ սովորում են ողագնացության գործը աերոպակումբներում, ցատկում են պարացյուներով, սովորում են տանկ դեկավարել, կրակում են գնդացիրներից, տակտիկա, տեղադրություն, ուղմա-սանիտարական գործն են ուսումնասիրում:

Խորհրդային յերիտասարդությունը պատրաստ է ամեն ըստ զենքը ձեռքին վոտքի յելնելու իր սիրելի հայրենիքը թշնամիների ամեն տեսակ վոտնագությունների դեմ պաշտպանելու համար:

Բանվորացյուղացիական կարմիր բանակում ուղմիկ լինելն, իրոք, ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու պատվավոր պարտականությունն ե, և մեր յերկրի ամեն մի յերիտասարդ պետք ե դեռ մինչև ԲԳԿԲ-ի շարքերը մտնելն իրեն պատրաստի այդ պարտականությունը կատարելու համար:

Հայրենիքը պաշտպանել պետք ե վո՛չ միայն քաջարի կարմիր բանակի շարքերում: Յերիտասարդը պարտավոր և իր հայրենիքը թշնամիներից պահպանել վոչ միայն այն ժամանակ, յերե խորհրդային կառավարությունը նրան զենքի տակ և կանչում: Նա պետք է հիշի, վոր բանվորների ու գյուղացիների միակ սոցիալիստական պետությունը ըրջապատված ե իրեն թշնամի կապիտալիստական աշխարհով, վոր այնտեղից դեպի մեր յերկրի ներսն են ձվում լրակսության, տեռորի, գիշերսիայի, վնասարարության թելերը, և վոր վեռևս բոլոր տրոցկիստական-զինովյական գարշելի սողունները—Փաշխտական մարդասպանները, լըրտեսները և զիվերսանտները չեն հանված իրենց բներից և չեն վոչնչացված:

Արթուր, գործոն զվաստությունը հայրենիքի թշնամիների վերաբերմամբ պետք է համարի ԽՍՀՄ-ի յերիտասարդ քաղաքացու ամբողջ եյությունը:

Ինչպես դիտապոստում կանգնած պանծալի սահմանապահ-

ներն աչալուրջ դիտում են իրենց վաստահացված խորհրդային սահմանների ամեն մի վերջովկը, այնպես ել կոմյերիտականը, մեր յերկրի յերիտասարդը պետք է խորամուխ լինի իրեն շըրջապատող պայմանների մեջ, պետք է ճանաչի իրեն շըրջապատող մարդկանց :

Սոյիսալիստական շինարարության յուրաքանչյուր, թեկուզ ամենահամեստ, բայց մեզ վստահացված ճակատամասում մենք պետք ենք հայրենիքի պաշտպանի մեր սրբադան պարտականությունը:

ՄԵՆՔ պաշտպանելու բան ունենք: Մեր քաջարի կարմիր հանակը, մեր ամբողջ խորհրդային ժողովուրդն իմպերիալիստների գեմ մզկելիք ապագա պատերազմում պաշտպանելու յեն իրենց՝ աշխարհում առաջին սոցիալիստական հայրենիքը, իրենց հողն իր ամենաուղակար հանածոների պաշտպանութ, իրենց անտառներն ու գետերը, իրենց գործարանները, յերկաթուղիները, վորոնք միմիայն մեր յերկրում են ամբողջ ժողովրդի սեփականությունն հանդիսանում: Նրանք պաշտպանելու յեն Խորհրդային թյուն բնակչության յերշանիկ ու բերկրալի կյանքը, նրա ժողովության բնակչության յերշանիկ ու բերկրալի կյանքը, աշխատանքի, կրթության, հանդուժուրդների բարեկամությունը, աստալինյան Սահմանադրությամբ ամբացված դրստի իրավունքը:

Մեր հզոր յերկիրը, մեր անզարտելի կարմիր խասավը
խաղաղության գործի հենարանն ե ամբողջ աշխարհում:

Խորհրդական գույությունն իսկ ամբապնդում և
Խորհրդական Միության գոյությունն իսկ ամբապնդում և
ամբողջ ճնշված մարդկության վստահությունն իր ազատագրման
վերաբերմամբ և բոլոր յերկիրների առաջավոր մարդկանց վոգե-
շնչում և պայքարելու համար :

Ահա թե ինչու խորհրդային ժողովուրդը, մեր յերիտասարդությունն այնպես ջերմ սիրում է իր փառապանծ կարմիր բարձրությունն ամբարտության հայրենիքի պատրիոտականը։ Ահա թե ինչու մենք բոլորս—մեր հայրենիքի պատրիոտականը։ Ահա թե ինք մեր բոլոր ուժերը նվիրելու մեր յերկրի ներս—պատրաստ ենք մեր բոլոր ուժերը նվիրելու մեր յերկրի պաշտպանության ամրացմանը և կրծքով պաշտպանելու մեր յերկրի կերպ։

Մեր պարտականությունն է պաշտպանել բոլեկիլյան կուսակցությունը, վորի ղեկավարությամբ մենք հաղթում ենք:

Մեր ամենասուաջին պարտականությունն է պահել, պահպահնել ամբողջ աշխարհի ճնշվածների մեծ դեկավար ընկեր Ստամբուլին, վոր ապահովեց սահմանադրության նախանձ հաղթանակը:

ԲՈԿ ԱՆԴՎԿՈՒԹՅՈՒՆ

69

I.	Ստալլըցյան Սահմանադրությունը հաղթանակած սոցիա-լիզմի դրոշն ե	10
II.	Աշխատանքի իրավունքը	26
III.	Հանգստի իրավունքը	47
IV.	Կրթության իրավունքը	60
V.	ԽՍՀՄ-ի քաղաքացիների պարտականությունների մա-սին	69
VI.	Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու սրբազն պարտականությունն ե	81

Թարգմ. Հովհ. Տ.-Հովհաննիսյան
Խմբ. Մ. Հովհաննիսյան
Տեխն. խմբ. Ա. Խաչատրյան
Սրբագրիչ Վ. Զիրիցյան
Կոնտր. որբ. Լ. Աբովյան

Գլավլիսի լիազոր Ի-4872, հրատ. № 433, պատվեր № 37,
Տիրաժ 10,000, ինդեքս ^{Ա-84} PK

Հանձնված եւ արտադրության 27/II-1937 թ.
Ստորագրված եւ ապագրության 4/IV-1937 թ.
ԳԻՆԻ 90 կ. ԿԱԶՄԱ 40 կ.
Հայկուսերած ապարան, Յերևան, Սլահվեռդյան № 71

ՀՀ Ազգային գրադարան



NL0215037

34. 756

ԳԻԱ 1 Ո. 30 Կ.

Ա. Յ. ԽԾԵՂՅԻ
СТАЛИНСКАЯ
КОНСТИТУЦИЯ
И СОВЕТСКАЯ МОЛОДЕЖЬ
АРМПАРТИЗДАТ, ЕРЕВАН